

ԿԵՆՍԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՅԵՎ ՔԻՄԻԱՅԻ ԾՐԱԳՐԵՐ

ՎՈՋ ԼՐԻՎ ՄԻՋՆԱԿԱՐԳ ՅԵՎ ՄԻՋՆԱԿԱՐԳ
ԳՊՐՈՑՆԵՐԻ ՀԱՄԱՐ


ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ՅԵՐԵՎԱՆ 1938

31 JAN 2018

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՄ ՄԱՆԿԱԿԱՆՈՒԹՅԱՆ
ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑՆԵՐԻ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ

ԿԵՆՍԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՅԵՎ ՔԻՄԻԱՅԻ ԾՐԱԳՐԵՐ

ՎՈՉ ԼՐԻՎ ՄԻՋՆԱԿԱՐԳ ՅԵՎ ՄԻՋՆԱԿԱՐԳ
ԴՊՐՈՑՆԵՐԻ ՀԱՄԱՐ



ԳԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ՑԵՐԵՎԱՆ 1988

ԲԻՈԼՈԳԻԱ *)

ՆԵՐԱԾԱԿԱՆ ԳՐՈՒԹՅՈՒՆ

1932 թ 25/VIII վորոշման մեջ Համ Կ (բ) Կ կենտկոմի առաջ ցուցումների հիման վրա, բիոլոգիայի ծրագրում մտցված են հետևյալ փոփոխությունները.

ա) ծրագրերի ուսման նյութի ներքին վերաբաշխումը տարված է այնպես, վոր V-VII դասարաններում մնացել է բուսաբանության (V դասարան և VI դասարանի առաջին կիսամյակ) և կենդանաբանության (VI դասարանի չերկրորդ կիսամյակ և VII դասարան) հիմունքներին վերաբերյալ նյութը: Մարդու անատոմիային, Ֆիզիոլոգիային, ինչպես նաև որգանական աշխարհի զարգացման տեսությունը վերաբերող նյութն ամբողջապես տեղափոխված է ավելի բարձր դասարանները, զբաղվելով իսկ ծրագրերի մեջ զգալի կրճատում, և կատարված, վոր հնարավորություն կտա ավելի լավ և հիմնավոր յուրացնելու բիոլոգիայի հիմունքները.

բ) ճշտված է սոցիալիստական շինարարության նյութը՝ բիոլոգիայի պարապմունքների պրոցեսում ոգտագործելու համար.

գ) ընդարձակված է բուսական ու կենդանական բջջի և բուսական ու կենդանական որգանիզմի բջջային կառուցվածքի վերաբերյալ հասկացողությունը.

դ) ճշտված է բնության մեջ և «կենդանի անկյունում» կատարելիք եքսկուրսիաների, դիտողությունների, պարտադիր լաբորատորական պարապմունքների, դպրոցամեծ հողամասի վրա փորձնական աշխատանքների միտմունքը.

*) Ծրագրերը կազմելու գործում մասնակցել են ընկ. ընկ. Բ. Վ. Վսեխովյասուկին, Ա. Ա. Շ. բանովը, Մ. Ի. Մեյնրիզը, Գ. Ի. Սուվորովան, Ն. Գ. Գրեմենեցկին, Վ. Ն. Վուչետիչը:



11-284997A

յ) տրված են առաջադրանքներ ամսագրին ինքնուրույն աշխատանքների և դիտողությունների համար.

զ) բացի ղրանից, բուսաբանություն ծրագրերը բեռնաթափված են յերկրորդական կոմպլեքսային նյութից (առաջինու վերջին թեմաները), ի հաշիվ վորի մտցված է մի նոր թեմա՝ «Բուսական աշխարհի հիմնական խմբերը». VI և VII դասարանների ծրագրերում կրճատված է դժվար և սակավ մատչելի նյութը. ի հաշիվ վորի ընդարձակված են այն թեմաները, վորոնք համապատասխանում են լերեխաների տարիքային առանձնահատկություններին (միջատեր, թռչուններ, կաթնասուններ):

Իրա հետ միասին ճշտված են մի շարք ձևակերպումներ:

Բիոլոգիայի գասընթացի խնդիրները

Բիոլոգիայի գասավանդումը V-VII դասարաններում պետք է հետևում լինի հետևյալ խնդիրներին.

ա) տալ բույսերի և կենդանիների մորֆոլոգիայի, անատոմիայի, ֆիզիոլոգիայի և սիստեմատիկայի բնագավառից այնպիսի գիտելիքներ, վորոնք անհրաժեշտ են որդանիզմների զարգացման հիմնական որինաչափությունները հասկանալու, ինչպես և մարդու անատոմիայի ու ֆիզիոլոգիայի և որդանական աշխարհի զարգացման թեորիայի հիմունքները հետադաշում յուրացնելու համար.

բ) բաց անել աշակերտների առաջ բուսական ու կենդանական որդանիզմների կյանքի պրոցեսների նյութականությունը և հակադրել կենդանի բնության նկատմամբ գիտական-մատերիալիստական աշխարհըմբռնումը կրոնա-իդեալիստական հայացքներին: Կոնկրետ կերպով ցույց տալ որդանի կառուցվածքի կապը ֆունկցիայի հետ, որդանիզմինը՝ շրջապատող միջավայրի հետ: Ցույց տալ կենդանի որդանիզմի յուրահատկությունը. գազափար տալ բջի և որդանիզմի բջջային կառուցվածքի մասին, ծանոթացնել համեմատական անատոմիայի, սաղմաբանություն և հնեարանություն բնագավառից վերցրած տարրական յերևույթների հետ. տալ տարրական պատկերացում որդանական աշխարհի պատմական զարգացման մասին: Հենց ղրանով տալ անհրաժեշտ յուր կրոնական նախապաշարմունքների ու սնոտիապաշտությունների դեմ անհաշտ պայքար մղելու և բնության նկատմամբ մարգսխտական հայացք մշակելու համար.

գ) ցույց տալ, թե ինչպես մարդը ներգործում է բույսի և կենդանու վրա, ինչպես նա որդանիզմի զարգացման որիսաչափությունները գիտենալու հիման վրա տիրապետում է բույսին և կենդանու բնությանը և թե ինչպիսի հսկայական հեռանկարներ են բացվում բուսաբանության, կենդանաբանության, ձկնաբանության մեջ ու սոցիալիստական տնտեսության մյուս ձյուղերում «որդանիզմի ղեկավարելու» աչք ճանապարհին: Միջուրիսի, Լիսենկոյի, Ս Ս Հ Մ-ի գիտահետադոտական հիմնարկների աշխատանքի որինակով ցույց տալ գիտություն հաշիղություններ:

Բիոլոգիայի պարապմունքների պրոցեսում մանկավարժը պարտավոր է.

ա) տալ աշակերտներին բույսերի և կենդանիների վրա գիտողություն ու փորձեր կատարելու սկզբնական ունակությունները և սովորեցնի հաստատել իրենց դիտողությունները նկարներով, գրանցումներով և կոլեկցիաներով. սիստեմատիկաբար յերեխաներին վարժեցնելով ինքնուրույն աշխատանքի.

բ) սովորեցնել աշխատել դասագրքի և ղրքի վրա, գիտակցաբար յուրացնել անցած նյութը.

գ) սովորեցնել պիտակցորեն կիրառել բիոլոգիան ուսումնասիրելիս ստացված գիտելիքները գյուկատնտեսական պրակտիկայում՝ սանիտարիայում և առողջապահություն մեջ:

Գիտելիքների սիստեմը

Բիոլոգիային վերաբերող գիտելիքների սիստեմը միջնակարգ դպրոցում կառուցվում է ալպիսի հետևողականությունով. տարրական դպրոցում բնագիտության տարրական բնդհանուր դասընթացից հետո, վորն իր մեջ տեղեկություններ և պարունակում անորդանական և որդանական բնությունից (ֆիզիկայի, քիմիայի, հանքաբանություն և բիոլոգիայի տարերքը), V դասարանից սկսած տրվում է սնական գիտությունների՝ բուսաբանության, կենդանաբանության, անատոմիայի և ֆիզիոլոգիայի եվոլուցիոն ուսմունքի հիմունքները:

1. Բիոլոգիայի գասընթացի սկսվում է բուսաբանության, ալպիսի ղն՝ բուսական որդանիզմի անատոմիական ֆիզիոլոգիական տեսությունով և բույսերի սիստեմատիկայի հիմունքներով:

Վերջինս տրվում է պատմական լուսաբանությունով:

Բուսաբանությունով ղրաղված են V դասարանը և VI դասարանը:

տարանի առաջին կիսամյակը: Ֆիզիոլոգիական հիմնական պրո-
ցեսները վերլուծությունը կապվում է բուսաբանությունից պրակտի-
կայի գիտական հիմունքների պարզաբանություն հետ: Այս մո-
մենտը չափազանց կարևոր է՝ վորպես թեորիան պրակտիկայի
հետ կապելու մոմենտ: Ուստի ծրագրերում սոցիալիստական շի-
նարարության վերաբերյալ այնպիսի նյութ է տրվում, վոր
մատչելի չե աշակերտների ըմբռնողությունը:

2. Բուսաբանությունը հետևում է պենդամբանությանը դա-
տընթացը՝ կենդանիների կարևորագույն խմբերի բնական դասա-
կարգման հիմունքների ձևով (V) դասարանի յերկրորդ կիսամ-
յակում և VII դասարանում): Այդ դասընթացը սոցիոլոգիա է
և վոլուցիոն գաղափարով, վորի կապակցությունը նրանում մեծ
տեղ ու բունում անատոմիա-ֆիզիոլոգիական համեմատական նյութ-
թը, ըմբռնմանը մատչելի հնեաբանական և ընդհանուր բիո-
լոգիական հիմունքներն նյութը: Որգանական (մասնավորապես
կենդանական) աշխարհի պատմական զարգացման գաղափար-
ներն ավելի լավ յուրացնել տալու համար դասընթացում քնն-
նարկվում են կենդանական աշխարհի այդ տեսակետից կարևորա-
գույն և դրա հետ մեկտեղ կոնկրետ ծանոթություն համար ա-
մենից ավելի մատչելի խմբերը, սկսած միաբջջիներից և վեր-
ջացրած պրիմատներով (ներառյալ): Վերջին գլխում VII դա-
սարանում առաջուց ուսումնասիրած նյութի հիման վրա յեզրա-
կացություններ են հանվում որգանիզմների եվոլուցիայի հիմ-
նական որինաչափությունների մասին և ճշտվում (տարրական
ձևով) փոփոխականություն, ժառանգականություն, գոյություն
կովի, ընտրություն վերաբերյալ գաղափարները, կենդանաբա-
նության դասընթացում, թեմատիկայի հետ սերտորեն կապակց-
ված, պարզաբանվում են սոցիալիստական տնտեսության մի-
ջարք կարևորագույն պրակտիկ հարցեր, որինակ՝ պարագիտնե-
րի և գյուղատնտեսական ֆնասատունների դեմ պայքարելու բիո-
լոգիական հիմունքները, ձկնաբուծություն, թռչնաբուծություն,
կենդանաբուծություն և ընտանի կենդանիների նոր ցեղեր ա-
ռաջացնելու գիտական հիմունքները:

3. VIII դասարանում տրվում է մարդու անատոմիայի և
ֆիզիոլոգիայի դասընթացը, վոր քննարկում է մարդու անատո-
միա-ֆիզիոլոգիական այն առանձնահատկությունները, վորոնք
կապված են նրա աշխատանքային գործունեություն հետ: Այդ
դասընթացը հանդիսանում է կենդանաբանության դասընթացի

բնական շարունակությունը և զգալի չափով հենվում է այն
գիտելիքների վրա, վոր աշակերտները VII դասարանում ստա-
ցել են քիմիայից: Իրա հետ միասին նա նյութ է տալիս, վորն
անհրաժեշտ է հետևյալ տարին, եվոլուցիոն ուսմունքի թեորիա-
յի դասընթացում, մարդու ծագման վերաբերյալ հարցն ավելի
լավ յուրացնելու համար:

4. Իններորդ դասարանում ուսումնասիրվում են եվոլուցիոն
ուսմունքի հիմունքները:

Ծրագրերի տպյալ հրատարակության մեջ վորոշ կրճատում-
ներ են արված, վորոնք, սակայն, չեն փոխում գիտելիքների
ընդունված սիստեմը: Բիոլոգիական առարկաների դասընթացն
անցնելիս անհրաժեշտ է դասազրեբրում նույնպես ծրագրի հա-
մապատասխան կրճատումներ կատարել:

Հակակրոնական գաստիաբակությունը բնագիտության գասերին

Ամենից ավելի ճիշտ պետք է համարել բիոլոգիայի դասե-
րին հակակրոնական դաստիարակության հետևյալ զրվածքը. նախ՝
հարկավոր է կոնկրետ վառ որինականերով մատերիալիստական
աշխարհըմբռնումը հակադրել ընտրության յերևույթների կրոնա-
իզեալիստական մեկնաբանությունը, յերկրորդ՝ հարկավոր է վառ
որինականը բերել գիտություն դեմ կրոնի մղած պայքարի
պատմությունից, ցույց տալ լեկեղեցին վորպես ճնշման գործիք,
վորպես խեղդիչ մարդկային առաջադիմություն, վորպես արգե-
լակ գիտություն զարգացման գործում:

Բնության յերևույթները մատերիալիստական բացատրու-
թյունը կրոնա-իզեալիստականին հակադրելը կարելի չե և հարկա-
վոր է կատարել բիոլոգիայի ծրագրի յուրաքանչյուր բաժնում:
Այսպես՝ V դասարանի բուսաբանությունից դասընթացում, բույսի
ուսումնասիրման հիմնական խնդիրը հանդիսանում է ցույց
տալը, թե բույսը կենդանի որգանիզմ է, բջջային կազմություն
ունի, զարգանում է սերմից, սնվում է հողից և ուղից, շնչում
է, բազմանում և այլն: Բույսի բոլոր այս կենսական պրոցես-
ները նյութական են:

Իզեալիստական աշխարհայացքը վաղուց իվեր պնդում
եր, թե բույսը կենդանի որգանիզմ է այն պատճառով, վոր ու-
նի «հոյի», կենսական ուժ, թեկուզ և ավելի ստորին կարգի,
քան կենդանիների հողին: Այսպես՝ ըստ առաջին բուսաբաննե-
րից մեկի՝ Յեզալպինի (1519-1603), բույսերի աշխարհը հանդի-

աանում է կենդանական թագավորութեան ձևափոխված և պար-
զադած պատճենը: Բուսյերն ոժտված են «հոգու» առանձին տե-
սակով, վորից կախված է նրանց սնվելը և բազմանալը, և կեն-
դանիններից եյականապես տարբերվում են նրանով, վոր նրանք
չունեն այնպիսի «հոգի», վորը կառավարում է շարժման և ըզ-
գացողութեան ընդունակութունը: Այստեղից էլ բուսյերի կազ-
մավորութեան համեմատական պարզութունը. նրանք չունեն
այն բարդ ապարատների կարիքը, վորոնց ոգնութեամբ կենդա-
նինները շարժվում և զգում են: Բուսը միայն սնվում և բազ-
մանում է: Այդ նպատակների համեմատ «բուսյի մի մասը, վոր
արմատ է անվանվում, ծառայում է սնունդ ընդունելու համար,
մյուսը, վորին փոքր բուսյերի մոտ ցողուն է անվանում, իսկ
ծառերի մոտ՝ բուն, տեսակի բազմացման համար սաղմ ունեցող
պտուղ է առաջացնում: Իսկ վորտեղ, բուսյի վրձ մասումն է
գտնվում նրա «հոգին»՝ նրա կենսական ուժը: «Բուսական հո-
գու նստելատեղ է ծառայում այն տեղը», պատասխանում է
Ֆեդալալինը, «վորտեղ արմատը փոխվում է ցողունի, բուսյի
«վզիկը»... Բուսյի մեջ կենսական սկզբունքը գտնվում է վոչ
թե կեղևում, այլ ավելի խորը, միջուկի մեջ, վորը միայն ցո-
ղունում գոյութուն ունի և վոչ թե արմատում»: Սերմը, վորը
բուսյի կյանքում շատ պատասխանատու դեր է խաղում, առա-
ջանում է, ինչպես այնդում է Ֆեդալալինը, միջուկից, ցողունի
ամենից ավելի «ազնիվ» մասից: Սերմը բուսյի «հոգու», նրա
կենսական ուժի կրողն է և մի սերնդից մյուսին տվողը: Չատ-
կական որերին ցորենի սերմերն որհնող լեկեղեցականների հա-
լացքներով սերմը, ինչպես և ձուռն, մեռններից հարութուն առ-
նելու նախապատկերն է: Սերմի և բուսյի մասին յեղած իրեա-
լիստական հայացքներն ահա այսպես է ոգտագործում յեկեղե-
ցին իր նպատակների համար:

Մեր խնդիրն է՝ սերմի վերաբերմամբ կրոնա-իդեալիստա-
կան այդ հայացքին հակադրել մատերիալիստական ուսմունքը
սերմի զարգացման մասին: Վոր տեղի յի ունենում վորոշ ար-
տաքին ֆակտորներ—Չերմութեան, խոնավութեան, ոգի թըթ-
վածնի ազդեցութեան տակ: Արմատի և տերևի ուսումնասիրու-
թեան ժամանակ նույնպես կարելի չի սնման պրոցեսների մատե-
րի լիստական բացատրութունը հակադրել իդեալիստական այն
ուսմունքին՝ կենսական առանձին ուժի մասին, վորի ազդեցու-
թեան տակ, իբր թե, բուսը վերամշակում է հողի հատուկ

նյութերը՝ «հումուսը», այնպիսի մի նյութի, վորից կազմված
է բուսյի մարմինը: Աստիճիլացիան ուսումնասիրելիս պետք է
ընդգծել, վոր վոչ մի առանձին կենսական ուժ չկա, այլ վոր
ուսնան առաջանում է բուսյերի կանաչ տերևներում արեգակի
լուսյի ազդեցութեան տակ:

Բուսյերի սոսոկեմատիկալի և կենդանաբանութեան դասընթա-
ցում կոնկրետ որինակներով առանձնապես անհրաժեշտ է ընդ-
գրծել փ փոխականութունն որգանիզմների աշխարհում և այն հա-
կադրել կենդանիների աշխարհի անփոփոխութեան և կայունութեան
մետաֆիզիկական աշխարհայացքին և կրոնի ուսմունքին: Այդ-
պիսի հակադրումը միանգամայն բնական է և կարելի չէ հաս-
կանալի դարձնել կենդանիների յուրաքանչյուր տիպն ուսում-
նասիրելիս: Կենդանական աշխարհի փոփոխականութունն ու
ազգակցութունը հիմյն է հանդիսանում կենդանական աշխարհի
ձևերի բազմազանութեան բնական ծագման ուսմունքի: Հենց
այդ միտքն էլ ապացուցում են բրածո բուսյերի և կենդանիներ-
ի մնացորդները: Բրածո որգանիզմների մնացորդներն ուսում-
նասիրելիս պետք է գիտութեան տվյալները հակադրել կրոնի
այն անհեթեթ հայացքին, թե մեռած կենդանիների մնացորդ-
ները համախարհային ջրհեղեղի արդյունք են կամ յուրահա-
տուկ «ծախքեր» են աստուծու ստեղծագործական «գործունի յու-
թեան» մեջ, վոր հենց իր ստեղծած, իրեն դուր չեկած կենդա-
նիններին քարացուցելու է դարձրել: Վերջապես ցույց տալ կշու-
ղիկի աշակերանների չկարակացութեան անհեթեթութունը՝ հա-
մաշխարհային կատաստրոֆաների և բազմիցս տեղի ունեց սծ ա-
բարչագործական ակտերի մասին:

Մարդու անստոմիալի և ֆիզիոլոգիայի դասընթացի մեջ
կազմութեան և ֆիզիոլոգիական պրոցեսների տվյալները հիման
վրա պետք է մերկացնել կրոնի ուսմունքը մարդու հատուկ
աստվածային ծագման մասին, նրա հոգու մասին, հարութեան
մասին, նյարդերի խանգարման մասին՝ վորպես արդյունք շար
վոգու դավերի, համաճարակների և ուրիշ իվանդութունների
մասին՝ վորպես աստուծու պատիժներ և այլն: Պետք է ցույց տալ,
թե կրոնն ու յեկեղեցին ինչ հսկայական վնաս են հասցրել
մարդկութեանը, գիտութեան մարդկանց վորքան լուսավոր կյան-
քեր են վոչնչաւրել մեղադրելով գիտնականներին հերետիկոսու-
թեան մեջ կամ ժողովրդի «փրկելով» հիվանդութուններից
«չարը խափանելու», հմայումները, ազոթքների միջոցով, ընդամին

խախտելով առողջապահութեան և սանիտարիայի տարրական պահանջները համահարակների ժամանակ, Համահարակների կապակցութեամբ յեկեղեցու խավարամուտութեան վառ որինակներ են բերված Ուայտի «Կրոնի պայքարը գիտութեան դեմ» գրքում:

Վերջապես, եվրոպերոն ուսմունքի դասընթացում առանձնապես համոզվեր յեղանակով պետք է ցույց տրվի իսկական գիտութեան պայքարը յերկու ճակատով՝ իդեալիզմի դեմ և մեխանիստական պարզացումների դեմ:

Բույսերը, նրանց որգանները, ինչպես և կենդանիներն ուսումնասիրելու ժամանակ պետք է ամեն կերպ մերկացնել աստվածաշնչի առապելն այն մասին, թե աստված ամեն ինչ ստեղծել է թի պետս մարդու, վորպես ստեղծագործութեան պատկի՞: Սերմերը, արմատապտուղները, պալարապտուղները, ըստ քանչեի ծաղիկները և պտուղները ստեղծել է հենց աշխատող վոր մարդը՝ ճանաչելով բնութիւնը, նրա որենքները, բույսերի և կ'նդանիների բիոլոգիական հարմարումները շրջապատող միջավայրին: Ջրային, չոր տեղերի կյանքի բիոլոգիական հարմարանքների փոփոխման, բեղմնավորման և ուրիշ բազմաթիվ հարմարանքների որինակներն այնքան շատ են թե բուսաբանութեան և թե կենդանաբանութեան դասընթացում: Վոր հնարավորութեան կտան հեշտութեամբ քողարկած անելու աստվածաշնչի տրարչագործական հեքյաթն այն մասին, թե ոգտակար բույսերն ու կենդանիները մարդու համար են ստեղծվել, ինչպես և վնասակարներն իրենց հերթին աստու կողմից են ստեղծված, ի պատիժ մարդու՝ նրա «մեղքերի համար»:

Պարագիտիզմի յերևույթները, հիվանդաբեր միկրոօրգանիզմների բիոլոգիան, վորդերի, միջատների և այլ վնասակար կենդանիների բիոլոգիան, մերկացում են տերտերական այն հեքիաթները, թե զրանք աստվածային պատիժ են մարդու համար Գիտելիքներով և տեխնիկայով գինված աշխատավոր մարդը հաղթահարում է բնութեանը, նրան իր նպատակների համար ձեզափոխում, և դրանով վերջնականապես քողարկած անում կրոնա իդեալիստական աշխարհայայքը, վորն ստեղծված է տիրող գասակարգերի կողմից հարստահարման նպատակներով:

Բուսաբանութեան, կենդանաբանութեան, անատոմիայի և ֆիզիոլոգիայի, եվրոպերոն ուսմունքի գաստվանդման ժամանակ պետք է ամեն մի հարմար առիթից ոգտվել ցույց տալու

համար, վոր գիտութեան, մատերիալիզմի հաղթանակը կրոնի և իդեալիզմի վրա՝ հեշտութեամբ չի ձեռք բերվել: Մարդկութեան պատմութեանը լի է ահավոր եջերով, վորոնք վկայում են գիտութեան մարդկանց, նրա անձնագործ մարտնչողների ու հերոսների վերաբերմամբ յեկեղեցական խավարամուտութեան, կեղեքողների տիրող դասակարգերի գործադրած վայրենի բռնութեան մասին: Գիտութեան դեմ կրոնի մղած պայքարի փաստերն ուսուցիչը կարող է քաղել աշխարհի գոթերից, ինչպիսիք պրոֆ. Վ. Վ. Լուենկիլի «Հերակլիտից մինչև Գարվին», Իաննեսմանի «Բնագիտութեան պատմութեանը», Ե. Գ. Ուայտի «Կրոնի պայքարը գիտութեան դեմ» և այլ գրքերն են: Ամերիկացի գիտնական Ե. Ուայտը ամբողջ 2) տարի տվյալներ է հավաքել իր գրքի համար: Նրա ընդհանուր սկզբունքային դրույթները, վոր գրքի մի քանի տեղում արտահայտված են կրոնի և գիտութեան հաշտեցման ու համաձայնեցման մասին, հակասում են այն բազմաթիվ փաստերին, վորոնք բերված են գրքում և վկայում են կրոնի անհաշտ պայքարի մասին ընդդեմ գիտութեան: Ուսուցիչը կարող է այդ գրքերից նյութ քաղել նրա համար, վորպեսզի իր աշխատանքի ընթացքում, դասերի ժամանակ գույց տա կրոնա-իդեալիստական և մատերիալիստական աշխարհայայքների պայքարի պատմութեանը: Այդպիսի նյութ կա բիոլոգիայի դասագրքերում: Բայց այդ բիոլոգիան բավական չէ, ուսուցիչն ինքն էլ պետք է մատնանշված գրականութեանից անհրաժեշտ նյութն ընտրի: Այսպես, մարդու անատոմիայի և ֆիզիոլոգիայի դասընթացում ուսուցիչն անպատճառ պետք է կանգ առնի Սերվետի վորբերգական վախճանի վրա, վորին կալվինը 1553 թվին այրեց նրա գրքի հետ միասին: Իր գրվածքում, վորից յերկու-յերեք որինակ մինչև մեր որերն է հասել, Սերվետը գրում է արյան հոսանքի մասին, ալ սրտախորշից դեպի ձախը, այսինքն՝ առաջին անգամ խոսում է արյան շրջանառութեան փոքր շրջանի մասին: Չի կարելի չպատմել նշանավոր վեդալիուսի վախճանի մասին: Ջոն Տոլանդը (1670-1729) ստիպված յեղավ փախչել հայրենի յերկրից՝ Իրլանդիայից, վորովհետև յեկեղեցին ձեռք բերեց իրլանդական պարլամենտի վորոշումը նրա գիրքը և հենց իրեն էլ այրելու նույնիսկ այն բանի համար, վոր նա միտք արտահայտեց, թե «աստված չերևան է գալիս վոչ թե հրաշքներում, այլ գործում

և բացառապես բնութայն որոնքի շրջանակներում: Եվ ուղեցիտ-
նիստ Բյուֆֆոնը յեկեղեցու ճնշման տակ ստիպված եր յերկրի
պատմական ծագման և զարգացման վերաբերյալ իր համոզ-
մունքից հրաժարվել: Պետք է շատ մանրամասնորեն մերկաց-
նել յեկեղեցականների դեմագոգիան Դարվինի կրոնականու-
թյան մասին:

Այստեղ մենք կանգ առնուք միայն մի քանի վառ որի-
նակներ Վրա աչն նպատակով: Վոր ցույց տանք, թե ուսուցիչն
ինչ ուզողութեամբ պետք է պատրաստվի իր աշակերտներին՝ վոր-
պես համոզված մարտնչող անասովածներին՝ դաստիարակութեան
հարցը վճռելու գործում:

Հարգանք դեպի գիտութունը, հարգանք դեպի գիտութեան
մարդիկ հարկավոր է դաստիարակել մեր աշակերտների մեջ,
ցույց տալ գիտութեան հսկայական նշանակութիւնը մարդկու-
թեան մղած պայքարում իր ազատութեան համար, բոլոր մարդ-
կանց յերջանկութեան համար: Հարկավոր է հպարտութեան
զգացմունք դաստիարակել դեպի այն հայրենիքը, վորտեղ գի-
տութիւնը փարթամ ծաղկում է ստացել: Հարկավոր է, վոր մեր
աշակերտներն իմանան այնպիսի անուններ, ինչպես Կ. Ա. Տի-
մոբ, Շմիդտ, Ուեննան գոնե ընդհանուր պատկերացում բիոլո-
գիական, բժշկական և գյուղատնտեսական գիտութիւններին
զարգացման մակարդակի մասին մեր յերկրում: Գիտնան, թե
ինչ հսկայական հոգատարութիւն և ունեւթիւն են ցույց տա-
լիս մեր յերկրում գիտութեան զարգացմանը կուսակցութեանը,
կառավարութիւնը և ընկեր Ստալինն անձամբ:

Մեթոտագիկ մեթոդները

Բիոլոգիայի վերաբերյալ գիտելիքներն աշակերտներին ա-
վելի լավ և ավելի հիմնավոր յուրացնել տալու համար դասա-
տուն պարտավոր է ծրագրային նյութի բովանդակութիւնը սիս-
տեմատիկ և հետեոզականորեն շարադրելու պրոպետում կազմա-
կերպիլ լաբորատորական փորձնական պարապմունքներ, կեն-
զանիների անդամաչեքումներ, միկրոսկոպիական դիտումներ,
բույսերի և կենդանիների վրա գիտողութիւններ կենդանի անկ-
յունում և բնութեան մեջ Դասատուն պետք է մի շարք եքս-
կուրսիաներ կատարի դեպի բնութիւն, գյուղատնտեսական

արտադրութիւն, գործարան, թանգարան. նա պետք է կազմա-
կերպիլ ուսումնական գյուղատնտեսական աշխատանք դպրոցին
կից հողամասում կամ շրջանային ագրոքաղայում: Դասատուն
պետք է սովորի կենդանի, հետաքրքրակ. ն գրուցներ անել
դասի ժամանակ, ոգտագործել դասագիրքը և գիրքը, փորձերի
դեմոնստրացիան, հավաքածուները, բազմազան դիտողական պի-
տույթները, բաշխման բնական նյութը, պրոնկցիոն լապտերը,
կինոն և այլն՝ գիտելիքները խորացնելու, ընդարձակելու և ամ-
բապնդելու համար: Միայն գանազանակերպ միջոցներ ոգտա-
գործելիս բիոլոգիայի դասատուն կկատարի այն խնդիրները,
վորոնք դրված են խորհրդային դպրոցում բիոլոգիայի դասըն-
թացի առջև:

Հենց այդ նպատակներով ել պետք է խթանել աշակերտներին
ինքնուրույն աշխատանքները՝ կազմակերպելով պատանի բնա-
գետների, պատանի փորձարարների (բուսաբույժների, անաս-
նաբույժների), բնութեան պատանի հետախույզների խմբակներ,
ամեն կերպ ոգնելով նրանց ինքնուրույն աշխատանքներին
ընթացքում, լայնորեն գործադրելով առաջադրանքներ տալը
բոլոր աշակերտներին՝ բույսերի և կենդանիների վրա փորձե-
րու գիտողութիւններ կատարելու և բիոլոգիական հավաքածուներ
կազմելու համար:

Մեծ նշանակութիւն են ստանում աշակերտների ամա-
ռային ինքնուրույն դիտողութիւններն ու աշխատանքները
բնութեան մեջ և դպրոցական հողամասում:

Դասատուն պետք է նախապես դրանք պատրաստի: Ամառ
ժամանակ մատչելի և հետաքրքրական գիտողութիւններ կա-
տարելու համար պարզ առաջադրութիւնները կոգնեն աշա-
կերտներին ծանոթանալու բնութեան այնպիսի յերևույթների
հետ, վորոնք դպրոցական աշխատանքի պայմաններում հաճախ
անմատչելի յեն անմիջական ծանոթութեան համար: Ամառը
ճամբարներում, գյուղում կամ դպրոցին կից հողամասում աշա-
կերտները շատ արժեքավոր գիտողութիւններ, գրանցումներ ու
նկարներ կանեն և կկազմեն արժեքավոր հավաքածուներ: Աշ-
նանն անհրաժեշտ է ամառը կատարած աշխատանքն ամփոփել,
խսկ հավաքած և մշակած նյութը ձևավորել վորպես ամառային
աշխատանքների ցուցահանդես: Հենց այդ նյութն ել պետք կգա
հետագա լաբորատորական պարապմունքների համար:

Դրա հետ միասին անհրաժեշտ է ամենակարճ ժամանակում վերացնել դասավանդման մեթոդներում լեզած այն խեղաթյուրումները, վորոնք դեռևս տեղ չեն գտնուել: Ամենից առաջ անհրաժեշտ է վճռական պայքար մղել բիոլոգիայի բանավոր—գրքային (սխոլաստիկ) այն դասավանդման դեմ, վոր գիտությունը կարում է կյանքից և սոցիալիստական շինարարությունից:

Ուսումնական միջոցները

Բիոլոգիայի դասավանդման ճիշտ դրման համար անհրաժեշտ է դպրոցին կից ունենալ բիոլոգիական լաբորատորիա՝ գործիքներով ու նյութերով համապատասխանորեն սարքավորված: Բիոլոգիայի դասատունն աշակերտների ոգնությամբ պետք է ժամանակին պատրաստի գործնական աշխատանքներին տալու նյութը (սերմեր, հողր նմուշներ, զանազան բույսերի հերքարիումներ, բույսերի մասեր, միջատների, մանր կենդանիների, քարայուկների հավաքածուներ և այլն):

Բիոլոգիական լաբորատորիայի անհրաժեշտ բաղադրիչ մասն է կենդանի անկյուր: Տեղական փորձեր ու գիտողություններ կատարելու համար՝ այդտեղ պետք լինեն զարգացման զանազան ստադիաներում գտնվող կուլտուրական կենդանի բույսեր (դեղրանց թվում սենյակի և վայրի), ինչպես նաև ակվարիումներ, տերրարիումներ, ինսեկտարիումներ և վոլյերներ՝ կենդանիների տեղավորելու համար: Կենդանի անկյունը կազմակերպելու և պահելու համար, նրանում տեղական գիտողություններ ու փորձեր զննելու համար հարկավոր է գրավել հետաքրքրվող աշակերտներին՝ պատանի քննադատների մի խումբ:

Բացի դրանից, դպրոցը պետք է ունենա բացթյաց լաբորատորիա՝ դպրոցին կից ուսումնական հողամաս՝ բուսաբուծական և կենդանաբուծական բաժիններով: Վորտեղ դպրոցներին կից հողամասեր չկան, պետք է մի քանի դպրոցներ միանան՝ ընդհանուր շրջանային կամ յինթաշրջանային ազդու բազա ստեղծելու համար: Դպրոցին կից հողամասում հավաքվում են բուսաբանությունից ստացվածները՝ երբ համար հարկավոր բույսերը, փորձեր են գրվում գյուղատնտեսական բույսերի և կենդանիների վրա, կատարվում են բիոլոգիական գիտողություններ:

Բնական է, վոր գարնանը և աշնանը աշխատանքները կենտրոնացվում են գլխավորապես բուսաբուծական հողամասում, կենդանիների վրա աշխատանքը կարող է կատարվել ամբողջ տարվա ընթացքում (ձագարներ, ընտանի թռչուն, լաբորատորական կենդանիներ և այլն):

Հենց այստեղ է կենտրոնացվում ամենից ավելի հետաքրքրվող աշակերտների՝ պատանի փորձարարների արտադպրոցական ինքնուրույն աշխատանքը: Առանձին նշանակություն է ունենալու նա՝ աշակերտների կողմից կատարվելիք ամառային առաջադրությունների համար: Բիոլոգ-դասատունն զպրոցական հողամասում աշխատանքն այնպես պետք է կազմակերպի, վոր յերեսների համար հրապարակ լինի:

Դպրոցական եքսկուրսիաներն ավելի եֆֆեկտիվ անելու համար դասատուն պետք է կապվի մոտակա գյուղատնտեսական և գործարանային ձեռնարկությունների հետ, տեղական թանգարանների, լաբորատորիաների և հետադասական հիմնարկների հետ: Հենց այդ ել անհրաժեշտ կլինի լաբորատորական աշխատանքի այնպիսի տեսակները գուլիս բերելու համար, վորոնք մասսայական դպրոցի պայմաններում սակավ մատչելի չեն: Այսպես որինակ՝ կապը գործարանային կամ սովորական լաբորատորիայի հետ հնարավորություն կտա միկրոսկոպիական պարզամուտքներ կազմակերպելու (հաճախ դպրոցում միկրոսկոպ չի լինում): Մի շարք արտադրական ձեռնարկություններում և հետազոտական հիմնարկներում կարելի չէ գեմոնստրացիայի և լաբորատորական մշակման համար նյութ ստանալ (բամբակի և ուրիշ թելատու բույսերի նմուշներ, գազանների մորթիներ, բուրդ, հումքի և կիսաֆարրիկատների բազմազան տեսակներ կուլտուրացված թյուրում կամ խորտնտեսությունում՝ սերմեր, կուլտուրական բույսերի նմուշներ և շատ ուրիշ բաներ):

Դասատուն պետք է լավ ուսումնասիրի բնական և գյուղատնտեսական շրջակայքը, վորպեսզի այն առավելագույն չափով ոգտագործի եքսկուրսիաների և անհրաժեշտ գիտողական պլանություններ պատրաստելու ժամանակ:

Մեծ նշանակություն կունենա դպրոցական կինոն՝ ծրագրի թեմատիկային համապատասխան ընտրված նկարներով:

Այնտեղ, վորտեղ նարավոր է, պետք է ոգտագործել պրոյեկցիոն լսպետքը և ալոսկոպը՝ դիագնոստիկներ ցուցադրելու համար:

ԲՈՒՍԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒՅՐՈՒՆ (1 ժամ)

Բուսարանությունը գիտությունն է բույսերի կազմության և կյանքի մասին: Բույսերի կյանքի գիտության նշանակությունը մատերիալիստական աշխարհըմբռնման համար: Բուսաբանությունը սպասարկու — սոցիալիստական շինարարության համար:

ԸՆԳԿԱՆՈՒՐ ԺԱՆՈՐՈՒՅՐՈՒՆ ԾԱՊԿԱՎՈՐ ԲՈՒՅՆԻ ԻՅՏ (5—9 ժամ)

Ծաղկավոր բույսի որգանները՝ արմատ, ցողուն, տերև, ծաղիկ: Բույսերի բջջային կազմությունը: Գաղափար բուսական բջջի մասին (թաղաթ, պրոտոպլազմա, կորիզ, բջջահյուս, վահուրներ): Գաղափար հյուսվածք՝ մասին:

Հարթատորական պարապմունքներ. 1) Ուսումնասիրություն ծաղկավոր բույսերի արտաքին կազմության. 2) ծանոթություն բույսերի բջջային կազմության հետ (աշխատանք խոշորացույցով):

Դեմոնստրացիա՝ բուսական բջիջը և հյուսվածքները միկրոսկոպի տակ (սոխի թաղանթը):

ՍԵՐՄԸ, ՆՐԱ ԾՂՈՒՄԸ ԵՎ ՍԵՐՄԵՐԻ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՈՒՄԸ ԳԱՆՏՈՒ ԿԱՄԱՐ (10—14 ժամ)

Միաշաքիլ և յերկշաքիլ բույսերի սերմերի կազմությունը: Սերմերի բաղկացությունը (ոսլա, սպիտակուց, ճարպ, շուր, հանքային նյութեր): Սերմի և նրա մասերի փոփոխությունը ծրելու ժամանակ: Սննդարար նյութերի նշանակությունը բույսի զարգացման համար: Ջանաղան բույսերի սերմերի ծրման համար անհրաժեշտ պայմանները՝ խոնավություն, ջերմություն, ոդի թթվածին: Սերմի ծրման պրոցեսի նյութականությունը: Սերմի ծրման իբր պայմանավորող հատուկ կենսա-

¹ Փակագծերում սեղ թվանշաններով ազված է ժամերի թիվը քաղաքային դպրոցի համար, իսկ բարակ թվանշաններով դյուղական դպրոցի համար:

սական ուժի, բույսի «հոգու» մասին յեղած ուսմունքի կրոնա-իդեալիստական արմատները:

Ծրող սերմերի շնչառությունը: Սերմացույցի աղբոսությունը և ծրունակությունը վորոշելու նշանակությունը՝ բերքի բարձրացման համար մզվող պայքարում: Սերմն որհնելու յեկեղեցական ծեսի անհեթեթությունը և քլասը:

Հարթատորական պարապմունքներ. 1) ծանոթություն սերմերի կազմության հետ. 2) ալյուրի պարզ անալիզը. 3) ճարպի հայտնաբերումը սերմերում:

Դիտողություններ կենդանի անկյունում և տանը. 1) սերմերի ծրցումը և ծրունակության տոկոս վորոշելը. 2) ծրման դիտողություններ և վորոշում:

ՍԵՐՄԱՏ: ԲՈՒՅՆԵՐԻ ԱՆՆԳՊՈՒՅՐՈՒՆԵՐ ԽՈՂԻԳ: ՀՈՂԻ ՎՐԱ ԱԳՂԵԼՁ ԳՂՈՒԴԱՏՆԵՍՈՒՅՐՈՒՆԻ ՄԵԶ (10—14 ժամ)

Հողի համառոտ բնութագրերը՝ վորպես միջավայր կանաչ բույսերի զարգացման համար:

Արմատի արտաքին կազմությունը: Արմատի ծալրապատյանը և մազարմատները: Արմատային սիստեմների տիպերը:

Արմատի ներքին կազմությունը: Մազարմատի միկրոսկոպային կազմությունը: Արմատի լուծող ազդեցությունը: Գաղափար ոսմոսի մասին: Ջրի մուտքը: Հանքային սննդարար աղերի մուտքն արմատի մեջ հողից: Փորձեր, վորոնք պարզաբանում են, թե ինչպիսի նյութեր հատկապես անհրաժեշտ են բույսի հաջող զարգացման համար: Ազոտ, ֆոսֆոր և կալիում պարունակող հանքային նյութերը: Գաղափար ջրային և ալազային կուլտուրաների մասին: Հողի պարարտացման և մշակման նշանակությունը բերքի բարձրացման գործում:

Արմատի աճը: Արմատի աճման տեղամասը (դոնան): Աճման նշանակությունը:

Արմատների շնչառությունը: Արմատի կազմության և միջավայրի պայմանների միջև յեղած կապը: Ցուցադրում միկրոսկոպով արմատների և մազարմատների միկրոսկոպիկ կազմության: Ցուցադրում հեղուկների ոսմոսի փորձի:

Դիտողություններ կենդանի անկյունում արմատի աճման վրա: Փորձադրույթներ՝ ջրային և ալազային կուլտուրաների:

46658299
11-2



**Տերեկ: ՍՅՆՊՈՒՐՅՈՒՆՆԵՆ յՊԻՅ: ԶԻ ԳՈՂՈՐՇԻԱՅՈՒՄԸ
ՏԻՐԵԿՆԵՐՈՎ (14—18 ժամ)**

Ողի բաղադրութիւնը՝ թթվածին, ազոտ և ածխածին
զաղ, նրանց հատկութիւնները:

Տերեկների դերը բույսերի սննդաուլթիւնն գործում: Տերեկնե-
րի արտաքին կազմութիւնը: Տերեկի բջջային կազմութիւնը:
Տերեկի հյուսվածքները՝ մաշկ, փափկանյութ, ան. թափեխալին
խուրձեր: Բլորոֆիլային հատիկներ, Հերձանցքներ: Ածխածին
զաղի տարրալուծումը կանաչ բույսերի կողմից բույսի տակ: Ած-
խածնի շուրջումը տերեկների կողմից: Ածխածնի յուրացման
արդյունքները (ածխաշերտ — ոսլա, շաքար): Լույսի և քլորոֆի-
լի հատիկների դերը ոսլա առաջանալու գործում:

Ոսլա և ուրիշ ածխաշրեք առաջանալու պրոցե-
սի նշուէթականութիւնը կանաչ բույսի մեջ վորպես
հակազիտ իքեալիստների կինսուէթի ուսմունքի, վորի ոգնու-
թյամբ, իբր, որգանական նյութն և առաջանում: Կանաչ բույ-
սերի ժողովրգա-տնտեսական նշանակութիւնը: Բույսերի շնչա-
ուլթիւնը: Շնչաուլթիւն հատուկ որգանների բացակայութիւն-
ը բույսերի մոտ: Զրի գոլորշիացումը բույսի կողմից: Հարմա-
րանքներ գոլորշիացումը կանոնաւորող:

Դեմոնստրացիա. 1) փորձերի. վորոնք պարզում են
թթվածնի և ածխածին զաղի հատկութիւնները. 2) տերեկի միկ-
րոսկոպիկ կառուցվածքը. 3) բույսի տակ կանաչ բույսի կողմից
թթվածին արտադրելու փորձերի:

Լաբորատորացիան աշխատանք. պարզել տերեկնե-
րում ոսլայի առաջացման պայմանները:

Դիտողութիւններ կենդանի անկյունում և
տանը. փորձեր՝ բույսի շուր գոլորշիացնելու վերաբերմամբ:

**Յողուն: Զրի յեվ սՅՆՊՈՒՐԵՐ ԵՂԱՓՈԽՈՒՐՅՈՒՆՆԵՐ
ԳՈՂՈՆԵՐԻ միջով (18—20 ժամ)**

Ծառի ճյուղի կազմութիւնը: Բողբոջների դասաւորու-
թիւնն ու կազմութիւնը: Բողբոջների դերը բույսի կյանքում:
Յողունի կազմութիւնը (ծառաբույսերի նկատմամբ՝ կեղև, կամ-
բին, բնափայտի միջուկ): Յողունի բջջային կազմութիւնը:
Անոթաթեխալին խուրձեր: Հիմնական, փոխադրող, մեխանիկա-
կան և պաշտպանողական հյուսվածք: Ծառի աճը դեպի վերև:

Աճման կոն: Ծառի աճումը հաստութիւնը: Կամբիոնի նշանա-
կութիւնը: Միաշարիլ բույսերի ցողունների կազմութիւնն ա-
ռանձնահատկութիւնը: Յողունի դերը բույսի կյանքում: Վե-
րելակ հոսանք: Զրի գոլորշիացումը տերեկների միջոցով և ար-
մատային ճնշման նշանակու. թիւնը վերելակ հոսանք առաջացնե-
լու գործում: Վարիշակ հոսանք: Յողունի ձևափոխութիւնը՝
կոճղարմատներ, պալարներ, կոճղեղներ. նրանց կառուցվածքը
և բիոլոգիական նշանակութիւնը: Վերերկրյա ցողունների ձևա-
փոխութիւնը՝ բույսի բիոլոգիական առանձնահատկութիւննե-
րի կապակցութիւնը:

Դեմոնստրացիաներ. ծառային և խոտային միաշա-
քիլ բույսերի ցողունների միկրոսկոպիկ կառուցվածքը (լայնա-
կի և չերկայնակի կարվածքները):

Լաբորատորական պարապմունքներ. 1) Ուսում-
նասիրութիւնն ճյուղի ճյուղաւորման, բողբոջների դասաւորման
և կառուցվածքի, վորոշումն ճյուղի տարիքի. 2) ցողունի միկ-
րոսկոպիկ կազմութիւնը՝ կեղև, կամբին, բնափայտ, միջուկ.
3) փոխադրող ձանապարհների հայտնաբերումը ցողունի մեջ.
4) կոճղարմատի, պալարի և կոճղեղի կառուցվածքը:

Դիտողութիւններ կենդանի անկյունում և
տանը. 1) դիտողութիւնն ճյուղերի արձակման վրա. 2) դիտ-
ողութիւնն կոճղարմատի, պալարի և կոճղեղի զարգացման վրա:

Ծաղկի Ծաղկավոր բույսերի բազմացումը (10—14 ժամ)

Սեռական բազմացում: Ծաղկի կազմութիւնը: Փոշոտման
և բեղմնաւորման ելութիւնը: Դաղափար սեռական բազմացման
մասին: Խաչածե փոշոտման նշանակութիւնը: Խաչածե փոշո-
տման որինակները բնութիւնն մեջ, Ծաղկափթթութիւնների դե-
րը: Միջատների և քամու միջոցով փոշոտվող բույսեր, Ինք-
նափոշոտման որինակներ: Պտղի առաջացումը: Պտուղների տե-
սակները և պտուղների ու սերմերի տարածումը: Խաչատե բազմ-
ան (Իբրիդիզացիայի) նշանակութիւնը նոր սորտեր առաջացնելու
գործում. Ի. Վ. Միչուրինը և նրա աշխատանքը:

Բույսերի նոր սորտերի առաջացումը մարդու ձեռքով
թխում և աստվածաշնչի այն առասպելը թե բույսերն ստեղծ-
ված են աստուծ ձեռքով մարդու համար:

Վեգետատիվ բազմացում: Բազմացում արմատների, ցողունների և տերևների միջոցով: Բուսաբուծությունն անդալիսներով, շիվերով և պատվաստով:

Դեմոնստրացիա. 1) ծաղկափոշու ծլումը. 2) բույսերի տրամախաչման ձևեր (կենդանի որջիկտներ, աղյուսակներ) և նոր սորտեր դուրս բերելու արդյունքներ (չիթե հնարավոր և, — կենդանի որջեկաներ, մողիլներ, աղյուսակներ). 3) վեգետատիվ բազմացման յեղանակներ. 4) շիվեր և պատվաստներ:

Հաբորատորական աշխատանք. ծաղկի կազմությունը:

Դիտողություններ կենդանի անկյունում և տանը. 1) ծաղկի զարգացումը, պտղի առաջացումն ու զարգացումը. 2) հիմնարկեք դպրոցական բուսաբանական այգու:

Բույսի զարգացումը (5—8 ժամ)

Բույսի զարգացման վեգետատիվ շրջանը: Աճման յերևույթները: Արմատի, ցողունի և տերևի աճման առանձնահատկությունն էր: Բարեխառնություն, խոնավություն, լույսի և հողի սննդաբար նյութերի ազդեցությունն աճման վրա: Ծաղկավաճ բույսի զարգացման ստադիաները: Միամյա, յերկամյա և բազմամյա բույսեր. Բույսերի զարգացման կանոնավորումը: Յարուսիկապիտի նշանակությունը: Բույսի զարգացման դեկավարումը դյուղատնտեսական պրակտիկայում վերջնականապես ջախջախում է իբր բույսին, վորպես կենդանի որգանիզմին հատուկ գերբնական ուժի ուսմունքը:

Դեմոնստրացիա կենդանի և հերբարիումային նմուշների, ինչպես նաև աղյուսակների՝ բույսի զարգացման ընթացքը ցույցադրող:

Դիտողություններ և փորձեր կենդանի անկյունում, վորոնք պարզաբանում են բարեխառնություն, խոնավություն, լույսի և հողի սննդաբար նյութերի ազդեցությունը բույսերի զարգացման վրա:

Եքսկուրսիա գեպի ջերմոցային տնտեսություն՝ բույսերի զարգացումը կանոնավորելու միջոցառումները ցույց տալու համար:

Նախապատրաստություն ամառային աշխատանքների (2—6 ժամ)

Ցուցումներ կոնկրետ բույսերի հավաքման և նրանց հարացման հերբարիոգրայի յեղանակի մասին:

Եքսկուրսիաներ և աշխատանքներ դպրոցին կից հողամասում (ծրագիրը տես հետո):

Կրկնություն (7—12 ժամ):

ՎԵՑԵՐՈՐԴ ԴԱՍԱՐԱՆ

ԲՈՒՍԱԲԱՆՈՒՅՈՒՆ (47—54 ժամ)

ԾԱՂԿԱՎՈՐ ԲՈՒՅՍԵՐԻ ԿԱՐԵՎՈՐԱԳՈՒՅՆ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԸ (20—30)

Գաղափար ծաղկավոր բույսերի սիսեմատիկայի մասին

Ծանոթություն ծաղկավոր բույսերի հետևյալ ընտանիքների ներկայացուցիչների հետ, նրանց բիոլոգիական առանձնահատկությունների և տնտեսական ոգտագործման հետ:

Դաս 1. Յերկշաքիլներ: Յենթադաս A— բաժանաթերթներ Ընտանիքներ. 1) հրանունկներ, 2) խաչածաղիկներ, 3) վարդածաղիկներ, 4) լոբազգիներ, 5) հովանոցավորներ:

Յենթադաս B— միասնաթերթեր: Ընտանիքներ. 1) մորմազգիներ, 2) շրթնածաղիկներ, 3) բարդածաղիկներ:

Հաբորատորական ծանոթություն ծաղկի կազմության և ծաղկավոր բույսերի մյուս որգանների հետ (կարեավորագույն ընտանիքների):

Գործնական վորոշումն ծաղկավոր բույսերի:

Բուսական աշխարհի հիմնական խմբերը

(Գաղափար բույսերի սիսեմատիկայի մասին) (19—24 ժամ)

Թաժին I. Ստրիկ սպորատու բույսեր

Բակտերիաները — մանրագույն վոչ կանաչ բույսեր: Նրանց տնտեսական նշանակությունը: Մարդկանց և կենդանիների մեջ համաճարակների առաջացման բնական պատճառները (հիվանդաբեր բակտերիաների կենսագործունեությունը): Առողջապահության և սանիտարիայի նշանակությունը համաճարակային հիվանդությունների դեմ պայքարելու գործում: Համաճարակ-

ները վորպես աստվածային ցասումի արտահայտութիւն ներկայացուցիւ կրօնական պատկերացումների, յեկեղեցական ազդեցութիւններ, հազորդութեան և մարդու հիվանդութիւնները հետ կապված ուրիշ ծեսերի վնասակարութիւնը:

Ջրիմուռները — վորպես կանաչ բույսերի ամենահին խումբը Քաղցրահամ ջրերի ջրիմուռները (միաբլիշներ և թելավորներ): Նրանց կազմութիւնը և կենսաձևը, Գորշ և կարմիր ծովա իւր ջրիմուռները և նրանց ոգտագործումը ժողովրդական տնտեսութեան մեջ:

Սունկերը վորպես քլորոֆիլազոտ ընկեր Սունկերի սնման և բազմացման առանձնահատկութիւնները: Ոգտակար սունկերի մշակումը: Պարազիտ սունկեր: Պայքար տնային սունկի, բորբոսների դեմ՝ հականեխման մեթոդներով: Յեկեղեցական որհնութիւնների և շուր ցանկու վնասակարութիւնն ու անհեթեթութիւնը: Սունկերի ծագումը:

Քարաքոսներ. նրանց կազմութեան յուրահատկութիւնը:

Բաժին II. Բարձրակարգ սպորոսու բույսեր

Մամուռները վորպես ցամաքային բույսերի վաղեմի խմբերից մեկը: Մամուռների կազմութեան պարզութիւնը՝ ծաղկավոր բույսերի համեմատութեամբ (ոիդոֆիտներ, մի քանի մամուռների ցողունների բացակայութիւնը): Մամուռների բազմացումը և դարգացումը: Տորֆային մամուռներ և տորֆի առաջացումը:

Չարխտակերպները (ձարխտներ, ձիաձետներ, գետնամուշկեր) վորպես ամենաբարդերը սպորատու բույսերից (ուսնն տերևավոր ցողուն և իսկական արմատներ): Չարխտների բազմացումն ու դարգացումը: Բրածո ձարխտներ, ձիաձետներ, գետնամուշկեր: Քարածխի առաջացումը: Բույսերի բրածո մնացորդները վկայում են բուսական աշխարհի հնութեան մասին և խորտակում են աստվածաշնչի առասպելը յերկրի միայն 7000 ամյա գոյութեան մասին:

Բաժին III. Ծաղկավոր բույսեր

Մերկասերմեր: Սոձին վորպես մերկասերմերի որինակ Սոձու բոլորգիան: Ծաղկի կազմութեան առանձնահատկութիւնները: Կրկնգոն վորպես բարձրակարգ բույսերի հնութեան կենդանի վկա:

Ծածկասերմեր: Ծաղկավոր բույսերը վորպես բուսական աշխարհի նորագույն խումբ: Նրանց ձևերի և հարմարվածութեան բազմազանութիւնը գոյութեան դանազան պայմաններին: Բույսերի աստվածային ծագման և այդ մոմենտից ըսկըսած նրանց անփոփոխութեան մասին կրօնական ուսմունքի վոչ գիտական լինելը:

Կուլտուրական ծաղկավոր բույսերի ծագումը՝ կոնկրետ որինակներով: Մարդն և ստեղծել կուլտուրական բույսերը վաղրիներից, և վոչ թե աստված և ստեղծել նրանց՝ «մարդու պետքերի համար», ինչպես այդ մասին աստվածաշունչն և ասում:

Ի ե մ ո ն ս տ ր ա ց ի ա՝ բակտերիաների, ջրիմուռների, սունկերի, քարաքոսների, մամուռների, ձարխտակերպների, մերկասերմ և ձածկասերմ բույսերի ներկայացուցիչների (միկրոպրիսարաաներ և բնական որչեկտներ՝ կենդանի և հերբարիական):

Ա. դ յ ու ս ա կ ն եր ի դ ե մ ո ն ս տ ր ա ց ի ա. բակտերիաներ, ջրիմուռներ, սունկեր, քարաքոսներ, մամուռներ, ձարխտակերպներ, մերկասերմեր և ձածկասերմեր:

Պյուղասնեռական եխկուրսիաներ յեվ աշխատանքներ

Չարոցին կից հողամասում

Բուսաբանութեան դասընթացը Չարոցում անհրաժեշտ և կապիլ դեպի գյուղատնտեսական ձեռնարկութիւնները կատարվող եքսկուրսիաների և Չարոցին կից ուսումնական հողամասի աշխատանքների կազմակերպման հետ:

Հինգերորդ դասարան (12 ժամ)

Մրազրի «Սերմ» բաժինն անցնելու կապակցութեամբ անհրաժեշտ և եքսկուրսիա կատարել դեպի կամ տեղական թանգարանի գյուղատնտեսական բաժին, կամ գյուղատնտեսական փորձնական կայան, կամ խորհանտեսութիւն, կուլտուրութիւն, վորպեսզի աշակերտները ծանոթանան սերմերի գոման, տեսակավորման և ախտահանման տեխնիկային (2 ժամ): Եքսկուրսիա Նյուլթն ամփոփելու համար պահանջվում և մեկ դաս (1 ժամ): Ընդամենը — 3 ժամ:

«Արմատ» թեմայի ուսումնասիրութեան ժամանակ անհրաժեշտ և ուշադրութիւն դարձնել հողի մշակմանը վերաբերող

գլուղատնտեսական մեքենաների ծանոթութեան վրա, հողի մը-
շակման և պարարտացման նշանակութեան վրա: Ընդամենը—
4 ժամ:

Վաղ գարնանը V դասարանում պետք է եքսկուրսիա կազ-
մակերպել դեպի ջերմոցային տնտեսութիւն՝ ծանոթացնելու
աշակերտներին ապակեպատ հողում կատարվող գլուղատնտե-
սական աշխատանքներին և ցուցադրելու բույսերի զարգացումը
«դիկովորող» պրակտիկ յեղանակները (2 ժամ): Այս նյութը
ճշտվում է դասի ժամանակ (1 ժամ): Ընդամենը 3 ժամ:

Գարնանը դպրոցին կից հողամասում (կամ քաղաքներում
ըջանային դպրոցական ագրոբազայում), խմբակային աշխա-
տանքի կարգով, պետք է հիմք դնել գլուղատնտեսական կուլ-
տուրաների (հացահատիկների, լոբազգիների, արմատապտուղ-
ների և պալարապտուղների, թելատունների, յուղատունների, կա-
ուչուկաբերների, դեղաբույսերի) հավաքածուների և պարզ փոր-
ձեր դնել պարարտանյութերով: Դրա համար անհրաժեշտ է պար-
նանային շրջանում հետևյալ պրակտիկ աշխատանքները կա-
տարել դպրոցական հողա մասում. 1) մշակել հողը (բահով և
փոցխերով). 2) պարարտանյութեր մտցնել (հանքային և որգանա-
կան). այդ աշխատանքների հետ կապակցված շատ կարևոր է
վաղ գարնանը դնել վեգետացիոն փորձեր (ավազային և ջրային
կուլտուրաներ). 3) ցանքս և շիթիլ անել: Ընդամենը գարնա-
նային պրակտիկ աշխատանքների համար — 6 ժամ:

Պեցերոզ գասարան (8 ժամ)

Տարվա սկզբին ամառային աշխատանքի ամփոփումները
կատարելիս անց է կացվում դպրոցական հողամասի վրա կա-
տարված փորձերի արդյունքների հաշվառում (3 ժամ):

Պետք է կատարել մի շարք զրույցներ. 1) բերքատուլութեան
բարձրացման հիմնական ուղիների մասին, կանգ առնելով գյուղ-
ատնտեսութեան մեքենայացման նշանակութեան վրա. 2) պար-
արտանյութերի նշանակութեան մասին. 3) մոլախոտերի դիմ
պայքարելու մասին. 4) տեսակավոր սերմերի նշանակութեան
մասին: Անհրաժեշտ է առանձնապես շեշտել սոցիալիստական
խոշոր տնտեսութեան դերը բերքատուլութեան բարձրացման գոր-
ծում (5 ժամ):

ԿԵՆԴԱՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ (37—54 ժԱՄ)

Ներածութիւն (3—4 ժամ)

Կենդանաբանութիւնը գիտութիւն է կենդանիների մա-
տին: Կենդանական ախարհի բաժանումը խմբերի (տիպ, դաս,
կարգ). կենդանաբանական տեսակ, մոտիկ տեսակների հա-
մախմբումը մեկ ընդհանուր սեռի մեջ. մոտիկ սեռերի և ընտա-
նիքների համախմբումը «ալլը» (կոնկրետ որինակներով): Կեն-
դանիների տեսակների անփոփոխութեան ուսմունքի կրոնա-
գեալիստական արմատները:

Կենդանաբանութեան նշանակութիւնը մատերիալիստա-
կան ախարհում բնութան համար:

Կենդանաբանական գիտելիքների նշանակութիւնը մեք-
յերկրի բնական հարստութիւնների ախրապետման գործում:

Նախակենդանութեան տիպը (7—9 ժամ)

Նախակենդանիների ընդհանուր հատկանիշները ամյոբայի
և պարամիցիումի (հողթափիկի որինակի վրա վորպես միա-
բջիջ կենդանիներ: Նրանց կազմութիւնը (պրոփոպլասմա, կո-
բիդ, պարիակուսներ) և կենսական գործունեցութիւնները (շար-
ժում, անպառութիւն, շնչառութիւն, արտաթորութիւն, գըր-
գըռականութիւն, բաղմացում):

Նախակենդանիների բաղմացանութիւնը: Գաղափար այն
պարզ կենդանիների մասին, վորոնք կանգնած են կենդանիների
և բույսերի սահմանում. մտրակավորների կամ խարազնակիբ-
ների դասը (կանաչ հիգլինա) և նրանց նշանակութիւնը բույ-
սերի ու կենդանիների միջև միասնութիւն հաստատելու գոր-
ծում: Արմատոտանիների դասը (ամյոբա, տնակավոր արմա-
տոտանիներ):

Ինփուզորի դասը վորպես ամենաբարձր խումբը նախա-
կենդանիների մեջ:

Ժամանակակից պարզ կենդանիները վորպես հետևանք միա-
բջիջ որդանիցիների զագագման յերկարատե պրոցեսի: Նա-
խակենդանիների դերը ապոնների առաջացման գործում (կավիճ
և կրաբարեր): Նախակենդանիները վորպես մարդու և կենդա-
նիների հիլանութիւններ առաջացնողներ և նրանց բիոլոգիա-
կան կապը վորոշ կենդանական ձևերի հետ (մալարիայի պա-
րազիտը):

Լաբորատորական պարամունքներ. 1) դիտեղինֆուզորիան միկրոսկոպի տակ. 2) դիտել կավիճը (բնական ապար) միկրոսկոպի տակ:

Իրտում նախակենդանիների վերաբերյալ կինոնկարի:

Մոլեկուլային օրգանիզմների օրգանիզմներ (7-9 ժամ)

Մոլեկուլային օրգանիզմների բնականուր բնութագրի որ հիդրայի որինակի վրա վորպես ստորին բազմաբջջյ կենդանիներ: Քաղցրահամ ջրերի հիդրայի կազմակերպումը և կենսաձևը. անսեռ և սեռական բազմացում. կորցրած մասերը վերականգնելու բնականուր կուրսի ցայտուն արտահայտությունը (ռեգեներացիա)՝ կապված նրա մարմնի կազմակերպման համեմատական միակերպության հետ:

Մովալին պոլիպներ և մեդուզներ. մեդուզի դարգացումը պոլիպից և նրա կազմակերպման բարդացումը՝ կապված աղատ լողալու կենցաղի հետ:

Կորալյան պոլիպների դասը. կրային կմախքի նշանակությունը՝ կապված ակնակոծություն շերտում ապրելու պայմանների հետ: Կորալների դերը յերկրի կեղևի առաջացման պրոցեսում:

Լաբորատորական պարամունքներ. 1) դիտողություններ կենդանի հիդրայի վրա (կերակրում, դիտում խոշորացույցով). 2) ռեգեներացիայի փորձեր:

Սպունգների օրգանիզմներ (1-3 ժամ)

Քաղցրահամ ջրի սպունգը (баджга) վորպես առաստարակ սպունգների տիպի ներկայացուցիչ. նրա կազմակերպումը և վարդացումը: Մովային սպունգների բազմազանությունը: Սպունգների կազմակերպումը՝ կապված նրանց նստակյաց կենցաղի հետ:

Սպունգների և աղեխորշավորների ազդակցությունը զուլթային մտրակավոր նախակենդանիների հետ: Միաբջջյ ըստադիան բազմաբջջյ կենդանիների դարգացման մեջ:

Վորդերի օրգանիզմներ (10-14 ժամ)

Վորդերի ձևերի բազմազանությունը. վորդերի տիպի բաժանումն առանձին լինթատիպերի:

Տափակ վորդերի լինթատիպը: Թարթիլավոր վորդեր (պլանարիա): Պարզիտային տափակ վորդեր՝ լերդուկ (լյարդի

ծծող), յերիդորդ: Նրանց դարգացման առանձնահատկությունները. տրափոխությունը և դրա բիոլոգիական նշանակությունը: պայքարի բիոլոգիական հիմունքներն առաջարկատների դեմ:

Կլոր վորդերի լինթատիպը: Ասկարիս, տրիխինա. կազմակերպման գլխավոր առանձնահատկությունները՝ կապված պարադիտային կենցաղի հետ. վարակման ճանապարհները և վարակման դեմ կանխիչ միջոցների բիոլոգիական հիմունքները:

Ողակավոր վորդերի լինթատիպը: Անձրևվորղը վորպես լինթատիպի ներկայացուցիչ. նրա արտաքին ու ներքին կազմակերպումը՝ կապված կենցաղի հետ: Անձրևվորղերի նշանակությունը հողագոյացման պրոցեսում: Համառոտ տեղեկություններ տղրուկների կազմակերպման և կենցաղի մասին: Ավելի բարձր կազմակերպման նշանները ողակավոր վորդերի լինթատիպի ներկայացուցիչների մոտ (հյուսվածքների դիֆերենցիացիա և որդանների սիստեմ):

Լաբորատորական պարամունքներ. 1) դիտողություններ կենդանի անձրևվորղի վրա (շարժողություն մեխանիզմ), 2) հերձում անձրևվորղի:

Փափկամորթների օրգանիզմներ (4 ժամ)

Անատամը (կամ գետային մարգագետնիցի) վորպես փափկամորթների տիպի ներկայացուցիչ. նրա կազմակերպումը կապված կենցաղի հետ: Թերթախիկների դասի ընդհանուր հատկանիշներն անատամի որինակի վրա. մի քանի ձևերի արդյունահանության նշանակությունը (վոստրենները, մարգարտարերը):

Փորոտանիների դասը: Ցամաքային և ջրային խիտուններ. նրանց արտաքին կազմակերպումը և կենցաղը: Խիտունները և կողմնային վորպես գլուղատնտեսության վնասատուներ:

Գլխոտանի փափկամորթների դասը (սեպիաներ, ութոտանիներ) վորպես փափկամորթների ամենաբարձր ձևը. նրանց արտաքին տեսքը, շարժվելու յեզանակը և կենցաղը:

Փափկամորթների նշանակությունը նստվածքային ապառանների առաջացման մեջ: Փափկամորթների բրածո ձևերը (ամմոնիտներ, բեղմնիտներ): կենդանիների բրածո մնացորդները վորպես «համաշխարհային ջրհեղեղի» հետևանք կամ «արարչի անհաջող փորձերի» արդյունք ընդունող կրոնական հայացքների հակադիտականությունը: (Յեկեղեցականների բանավիճը Լեոնարդո-դա-Վինչիի հետ):

Հաբորատորական պարապմունքներ. հերձում
անատամի:

Կրկնութիւն (5—9 ժամ):

ՅՈՒԵՐՈՐԴ ԴԱՍԱՐԱՆ

ԿԵՆԴԱՆԱԲԱՆՈՒՅՅՅԻՆ (84—108 ժամ)

ՆԵՐԱԾՈՒՅՅՈՒՆ (2—2 ժամ)

Կրկնութիւն յեկ համառոտ ակնարկ VI դասարանում անցած
կենդանաբանական կյուրքի

Հոգվածոտանիների սիպը (12 -15 ժամ)

Գետի խեցգետինը վորպես հոգվածոտանիների տիպի
ներկայացուցիչ. նրա արտաքին ու ներքին կազմութիւնը՝ կապ-
ված կենցաղի հետ: Կառուցվածքի բարդացումը՝ ողակալոր վոր-
դերի համեմատութեամբ. խիտինե ծածկոցը և հատկաձավոր վեր-
ջավորութիւնները վորպես հոգվածոտանիների բնորոշ ա-
ռանձնատկութիւն:

Հոգվածոտանիների տիպի բաժանումն առանձին դասե-
րի Խեցեմորթների դասի ընդհանուր հատկանիշները: Ստորա-
կարգ խեցեմորթները (գաֆնիաներ և ցիկլոպներ) և նրանց նը-
շանակութիւնը բնութիւն կյանքում ու ձկնատնտեսութեան
մեջ: Խեցեմորթները յերկրաբանական հնութիւնները:

Սարդակերպների դասի և բազմոտանիների դասի արտա-
քին կազմութեան և կենցաղի ամենաբնութիւնը բնորոշ առանձ-
նատկութիւնները:

Միջատների դասը: Միջատի արտաքին և ներքին կազմու-
թիւնը: Բազմացման և զարգացման առանձնատկութիւնները.
լրիվ և թերի կերպարանափոխութիւն ունեցող միջատներ: Մի-
ջատների գլխավորագույն կարգերը և նրանց համառոտ բնու-
թագիրը՝ ըստ թևերի ու բերանամասերի կազմութեան և ըստ
կերպարանափոխութեան յիղանակի:

Միջատների ձևերի բազմաթիւութիւնը և նրանց հարմա-
բումների բազմազանութիւնը կյանքի տարբեր պայմաններին:
Պաշտպանողական հարմարանքներ՝ հովանավորող գունավորում
և պաշտպանող նմանութիւն. նախազգուշացուցիչ կամ կանխիչ
գունավորում, միմիկրիա: Այդ հարմարանքների հարաբերական

նշանակութիւնը և «նախասկզբնական նպատակահարմարու-
թեան» բացակայութիւնը նրանցում: «Նախասկզբնական նպատա-
կահարմարութեան» թերիայի կրօնական արմատները:

Այսպես կոչված «հասարակական» միջատները: Մեղու, նրա
բիոլոգիական առանձնատկութիւնները և նրանց ոգտագոր-
ծումը մարդու կողմից: Մեղի ընտանիքի ծագման հարցը, մե-
նակյաց մեղուներ, իշամեղուներ:

Հասարակական միջատների գիտակցական գործունեյու-
թեան մասին յեղած կրօնական և իդեալիստական պատկերա-
ցումների հակագիտականութիւնը:

Միջատների նշանակութիւնը բնութեան կյանքում և մար-
դու տնտեսութեան մեջ: Միջատները և ծաղիկները: Միջատները
վորպես գշտնաշատնտեսութեան վնասատուներ: Միջատները վոր-
պես հիվանդութիւններ փոխանցողներ: Այն բնական պատճառ-
ները, վորոնք առաջացնում են միջատների քանակի տատա-
նումները (վնասատուների բազմութեամբ յերեան գալի և նրանց
հետագա անհետացումը): Կրօնի այն պնդումների հակագիտա-
կանութիւնը, թե վնասատու միջատների մասսայաբար յերեալն
աստուծոց ցասումի արտահայտութիւնն է. յեկեղեցական աղոթք-
ների և հմայումների վնասը: Պարագիտ միջատների (հեծյալնե-
րի և սիֆտոնա ճանձի) գործունեյութեան ոգտակարութիւնը
մարդու համար: Պայքարի բիոլոգիական հիմունքները վնասա-
տու միջատների դեմ:

Հոգվածոտանիների կապն ողակալոր վորդերի հետ:

Հաբորատորական պարապմունքներ. Արտաքին
զննում և հերձում գետի խեցգետնի կամ խոշոր միջատի (սև
խավարասերի):

Փժամորթների սիպը (4—5 ժամ)

Մովաստղը վորպես փշամորթների տիպի ներկայացուցիչ.
Նրա արտաքին տեսքը և կենցաղը: Զրանթալին համակարգը
վորպես փշամորթների բնորոշ առանձնատկութիւն: Գաղա-
փար փշամորթների տիպի առանձին դասերի մասին (ձովաստ-
ղեր, ձովողնիներ և ձովաշուշաններ): Փշամորթների զարգացու-
մը յերկկողմ համաչափ թրթուրներից:

Հարավորների դասը (4—5 ժամ)

Գանգազուրկների և վողնաշարավորների յենթատիպերը:

Նշտարիկը վորպես մի ձև, վորը մոտ է վողնաշարավորների հին նախնիների (ավողնաշարավոր առանց վողերի)։

Լարավորների տիպի ընդհանուր բնութագիրը 1) առկայություն թիկնալարի, 2) թիկնալին նյարդալին խողովակ, 3) առկայություն խոնկային ձեղքերի՝ հատուկ ձևերի կամ սաղմերի մոտ։

Չ-Ների դաս (9—10)

Գետի պերկեսը վորպես ձկների դասի ներկայացուցիչ։ Ձրկների դասի բաժանումը խմբերի։ Ճեղքախոնկներ և ճարպաթևի ձկներ, այդ կարգերի համեմատական հնութունը և նրանց ժամանակակից բաշխումը։ Վրահրոտ ձկները վորպես ավելի ուշ խումբ, վորն իր ծաղկման է հասել յերկրի կյանքի ներկա շրջանում։

Ձկների բազմացումը, գրած ձվերի յանակի և սերունդ պահպանելու բնազդի միջև յեղած կապը։ Արդյունագործական ձկնորսություն և նրա կապը ձկների կյանքում յեղած սեզոնային յերևույթների հետ (ձկնորսություն շրջանների ժամանակ)։ Մովային ձկնորսություն և նրա զարգացումը սոցիալիստական անտեսություն պայմաններում ԽՍՀՄ-ի մեջ։ Ձկնարուծություն և լճային անտեսություն։

Լաբորատորական պարապմունքներ, ձկն արտաքին գննում և հերձում։

Յերկկենցաղների դաս (6—8 ժամ)

Գորտը վորպես յերկենցաղների դասի ներկայացուցիչ։ Նրա արտաքին և ներքին կազմությունը, համեմատություն գորտի և ձկան միջև, գորտի առանձնահատկությունները՝ կապված ջրից ցամաք գուրս գալու հետ։ Զրազազանների առկայությունը վորպես գորտի գոյություն պայման գորտի բազմացումը և շերտիկի զարգացումը։ Ներսիփուկի՝ ձկնակերպ կենդանու ստադիալ անցումը, վորպես արտացոլում յերկկենցաղների զարգացման պատմական պրոցեսի։

Յերկկենցաղների բաժանումը պոչավորների և անպոչների կարգերի՝ այդ խմբերի բնութագրերով՝ առանձին ներկայացուցիչների որինակների վրա։

Հնագույն յերկկենցաղները՝ ստեգոցեֆալները՝ և նրանց կապը հին ձկների հետ։ Նրանց յերևան գալու պայմանները։ Յերկկենցաղների ծաղկումը քառաձայն զարաշրջանում (միաժամանակյա զարգացումը «յերկկենցաղ» բուսականության)։ Յերկկենցաղների հարմարման անկատարությունը ցամաքային կենցաղին։

Լաբորատորական պարապմունքներ, Արտաքին գննում և հերձում գորտի։

Սողունների դաս (4—6 ժամ)

Մողեսը վորպես սողունների դասի ներկայացուցիչ։ Նրա արտաքին և ներքին կազմությունը՝ կապված կենցաղի հետ։ Սողունների տարրերությունը յերկկենցաղներից և նրանց ավելի բարձր կազմության գծերը։ Սողունների բազմացման առանձնահատկությունները, վորոնք նրանց համար հնարավորություն են պայմանավորում ցամաքային կենցաղին անցնելու։

Սողունների բաժանումը կարգերի, այդ կարգերի համառոտ բնութագրերը՝ առանձին ներկայացուցիչների որինակների վրա (մողեսներ, ոձեր, կոկորդիլոսներ, կրիաներ)։ Անվոտ ձեռքի վերջավորությունների ուղղիմանները (գեղնափորիկի, վիրապոձի)՝ այդ կենդանիների՝ չորքոտանի սողուններից ծագած լինելը ցույց տվող։

Սողունների ծագումը ստեգոցեֆալներից։ Ժամանակակից մողեսների զազաթնալին աչքը վորպես առանձնահատկություն՝ ժառանգված հին ստեգոցեֆալներից։ Սողունների ծաղկումն ու բազմազանությունը միջին կենդանական երայում (հոյամողեսներ, ձկնամողեսներ, թռչող մողեսներ) և նրանց հետագա մահացումը։ Կենդանական աշխարհի հնությունը՝ վորպես հակակշիռ աստվածաշնչի այն ուսմունքին, թե աստված ստեղծել է կենդանիներին ընդամենը 7000 տարի առաջ։

Սողունները, յերկկենցաղները և ձկները վորպես կենդանիներ, վորոնք չունեն մարմնի կայուն շերտություն։ Զմեռային քնի և անարիօզի (երևույթները վորպես հարմարանքներ կյանքի պայմաններին)։

Թռչունների դաս (15—19 ժամ)

Թռչունի մարմնի արտաքին և ներքին կազմության առանձնահատկությունները՝ կապված նրա կենցաղի հետ (կոնկ-

րեստ որինակով): Արտաքին նկարագիրը (փետրավորումը, կտուցը, վտանները, վզի ճկունությունը՝ մարմնի համարյա կտարյաջ անշարժություն հետ միասին): Ներքին որգանները: Թռչունների կմախքի առանձնահատկությունները: Առջևի վերջավորությունների մասնագիտացումը և նրանց աշխատանքները թռչչքի ժամանակ: Թռչունների և սողունների կազմութան ընդհանուր գծերը:

Չուն և նրա կազմությունը: Մաղմի դարգացումը ձվի մեջ: Խոնկային ձեղքերի բուսականները վորպես վկայություն, վոր ցամաքային վորնաշարավորները ծագել են ջրային հին ձեերից: Թռչունների և սողունների սաղմերի նմանությունը՝ նրանց մտակ ազակցությունը ցույց տվող:

Նախաթռչունները վորպես կապող ողակ թռչունների և սողունների միջև:

Ժամանակակից թռչունների դասակարգությունը: Տափակահուրծք և վորնուցակուրծք թռչունների յենթադասերը: Վորնուցակուրծք թռչունների բազմազանությունը՝ ստեղծված պատմական զարգացման պրոցեսում, միջավայրի զանազան պայմանների հարմարվելու և կեր հալթայթելու գանազան յեղանակների կապակցութ, լամբ: Գաղափար վորնուցակուրծքների գլխավորագույն կարգերի մասին (սագակերպներ, գիշատիչներ, սագեր, ներկարարներ, ճնճղուկներ):

Թռչունների բազմացումը: Չվերի գունավորման և ձևի բիոլոգիական նշանակությունը: Բնախուլս և բնակալ թռչուններ. կկույի ձագերի պարագիտիզմը: Թռչունների չուն, դրա բիոլոգիական նշանակությունը և ծագումը:

Կարճասունճների դաս (17 22 ժամ)

Կաթնասուն կենդանիների առանձնահատկությունները՝ վորնաշարավորների այլ դասերի համեմատությամբ (կոնկրետ որինակներով). ներքին և արտաին կազմությունը, բազմացումը և զարգացումը: Կաթնասունների ձևերի գանազանակերպությունը կապված կենցաղի և սպրկու միջավայրի հետ, առաջացած պատմական զարգացման հետևանքով:

Միանցքանիների կամ ձվածիների յենթադասը (բաղակուտուց, չխիզնա) վորպես մի խումբ՝ կաթնասուններին սողունների հետ կապող:

Հնագույն կաթնասունների հանդես գալը միջին երալի ըսկըբում և նրանց հավանական ծագումը հին գաղանամողեսներից:

Պարկավորների յենթադասը վորպես կաթնասունների զարգացման ավելի բարձր աստիճան (միանցքանիների համեմատությամբ): Պարկավորների ժամանակակից ծավալումը և նրանց ձևերի բազմազանությունն Այստրալիայում՝ կապված այդ ցամաքամասի վաղ անջատման հետ:

Բարձրակարգ կաթնասունների յենթադասը, Բարձրակարգ կաթնասունների արագ ծաղկումը և մասնավորվելը յերրորդական զարաշրջանում:

Միջատակերների կարգը վորպես մի խումբ, վոր պահպանել և ամենամեծ մոտիկությունը հին բարձրակարգ կաթնասունների հետ (ատամնային ապարատի թույլ տարբերակումը, մանր չափսերը, հնգամատությունը և թաթագնացությունը):

Չղջիկների կարգը վորպես մասնագիտավորված խումբ, վոր մոտիկ և միջատակերներին:

Կրծողների կարգը վորպես մի խումբ, վոր հարմարված է բացառապես բուսական կերով սնվելուն. կրծողների բիոլոգիական առանձնահատկությունները, վորոնցով պայմանավորվում է նրանց ծաղկումը ներկա զարաշրջանում: Կրծողները վորպես գյուղատնտեսության վնասատուներ:

Մաքակավորների կարգը: Մաքակավորների ծաղկումը՝ կապված բաց տափաստաններ առաջանալու հետ. սմբակավորների ծաղումը ձիու որինակի վրա: Կնճիթավորների կարգի առանձնահատկությունները և նրանց ծագումն ավելի մանր և ավելի պակաս չափով մասնավորված ձևերից:

Գիշատիչների կարգը և նրա մեջ մտնող գլխավոր ընտանիքները: Թիավորանիների և կիտազդիների կարգը վորպես խիստ փոփոխված և մասնավորված հետնորդներ հին գիշատիչ կաթնասունների:

Պրիմատների կարգը և նրա առանձնահատկությունները: Կապիկները վորպես մազլցող կենդանիներ: Մարդը վորպես պրիմատների կարգի անդամ. մարդու կազմություն այն պծերը, վորոն ով նա տարբերվում է կենդանիներից:

Ընտանի կաթնասուններ: Ընտանի գլխավոր կենդանիների (շան, կովի, վոչխարի, խոզի) ծագումը: Ընտելացման և ընտանեցման բիոլոգիական հիմունքները. ընտանի կենդանիների ցիդերի գանազանակերպությունը և արհեստական ընտրություն նշանակությունը: Կենդանիների ընտանեցման և նոր ցեղեր ըստեղծելու վերաբերմամբ մարդու պրակտիկ գործունեյություն

նշանակութիւնը կրօնական այն պատկերացման դեմ պայքարի գործում, թե ընտանի կենդանիներն ստեղծված են «մարդու պետքերի համար» և թե կենդանիների տեսակներն անփոփոխ են: Վորսի գազաններ և վորսորդութիւնն Գազանաբո ծովայինը վորպես սոցիալիստական կենդանաբուծութեան մի նոր ճյուղ: Բնութեան պահպանութիւնը և Ս Ս Հ Մ-ի ֆաունայի վերականուցումը:

Լաբորատորական պարապմունքներ, Հերձում մանր կաթնասունի (կրծողի, կատվի):

Ամփոփում (4—6 ժամ)

Կրկնութիւն, ընդհանրացում և կառուցում հետեութիւնների ու ամփոփումների՝ կենդանաբանութեան և մասամբ բուսաբանութեան դասընթացի նյութի հիման վրա*):

Ընդհանուր տեսութիւն կենդանական կյանքի զարգացման աղյուսակի Գազափար փոփոխականութեան և ժառանգականութեան մասին: Տեսակների կայունութեան մասին յեղած ուսմունքի կրօնա-իդեալիստական արմատները: Փոփոխականները վորպես նախանշված ապագա նոր տեսակներ: Մարդու կողմից կիրառվող արհեստական ընտրութեան ելութիւնը և բնական ընտրութիւնը բնութեան մեջ, վորպես ընտրութիւնն որգանիզմի համար ոգտակար ժառանգական փոփոխութիւնների՝ կատարված սերունդների անհամար շարանում, գոյութեան պայքարի պրոցեսում:

Կրկնութիւն (7—8 ժամ)

ՈՒԹԵՐՈՐԴ ԴԱՍԱՐԱՆ

ՄԱՐԴՈՒ ԱՆԱՏՈՄԻԱՆ ՅԵՎ ՖԻԶԻՈԼՈԳԻԱՆ (84—108)

Ներածութիւն (1—1 ժամ)

Մարդու անատոմիան և ֆիզիոլոգիան և նրա խնդիրները: Մարդու և կենդանիների նմանութիւնն ու տարբերութիւնը: Գործիքներ արտադրելու ու գործածելը վորպես մարդու տարբերիչ գծեր: Աշխատանքն և մարդկային կյանքի հիւրը: Աշխատանքի

*) Այս բաժնի հետագա նյութը քննվում է միայն վոչ 10-ի միջնակարգ դպրոցներում:

տանքը Ս Ս Հ Մ-ի մեջ և աշխատանքը վորպես մարդու ձեռք ապօրոճութեան համար նշույթ ընդունող աստվածաշնչի ուսմունքի գասակարգային ելութեան մերկացումը: Մարդու անատոմիայի և ֆիզիոլոգիայի ուսումնասիրութեան նշանակութիւնը կրօնի և իդեալիզմի դեմ մղվող պայքարում:

Բջիջներ լեվ հյուսվածքներ (8—8 ժամ)

Բուսական և կենդանական բջիջների կազմութեան նմանութիւնն ու տարբերութիւնը: Կորիզի, պրոտոպլազմայի և թագանթի դերը կենդանական բջիջի մեջ: Բջիջների բաժանումը:

Կենդանական հյուսվածքների կազմութիւնը՝ ծածկող, կրծիկային, շարակցական և մկանային հյուսվածքների որինակների վրա (բջիջներ, միջբջիջային նյութ, սինցիտիաներ):

Համառոտ տվյալներ որգանիզմների բջիջային կազմութեան ուսմունքի պատմութիւնից:

Բջիջի և որգանիզմների բջիջային կազմութեան մասին մատերիալիզմի մղած պայքարի վառ դեպքերը մետաֆիզիկական և իդեալիստական պատկերացումների դեմ՝ մարդու կմախքի և մկանների ուսումնասիրութեան կապակցութեամբ: Վեղալիտսի վախճանը:

Լաբորատորական պարապմունքներ և դեմոնստրացիաներ: Միկրոսկոպիական պարապմունքներ բջիջի և հյուսվածքների ծանոթութեան վերաբերմամբ:

Վոսկրա-մկանային սխսեմը (9—10 ժամ)

Վոսկրա-մկանային սխսեմի նշանակութիւնն որգանիզմի համար: Համառոտ տեղեկութիւններ գիտութեան և կրօնի պայքարի պատմութիւնից:

Մարդու և վողնաշարավոր կենդանիների կմախքի կազմութեան մեջ յիղած նմանութիւնը: Մարդու կմախքի կազմութեան առանձնահատկութիւնները՝ կապված մարմնի ուղղահայաց դիրքի հետ (գանգը, վողնաշարը, կոնքը, թաթը, ձեռքի զաստակը):

Վոսկրների միացումն իրար հետ: Հոգերի կազմութիւնը: Վոսկրների բազադրութիւնը և կազմութիւնը: Վոսկրամաշկի գերը: Կոտրած վոսկրների կաշի միանալը: Մկանների ամրացումը վոսկրներին: Կմախքի մկանները և ներքին որգանները

մկանները: Կծկումը վորպես մկանների հիմնական հատկութունը: Գաղափար մկանի հոգնության մասին: Ռիթմի և բեռնվածության նշանակությունը մկանների աշխատանքի մեջ: Մկանների նորմալ գործունեյության պայմանները (թթվածնի, սննդարար նյութերի մատակարարումը քայքայման արդյունքների հետաքուցում): Մկանային գործունեյության ազդեցությունը մկանային սխտեմի և ամբողջ օրգանիզմի վրա:

Լաբորատոր պարապմունքներ և դեմոնստրացիաներ. 1) կմախք կամ կմախք ու մկաններ պատկերող տախտակներ. 2) վոսկրի արտադրած օրգանական ու հանքային նյութերը. 3) դիտողություն մկանների կծկումների գորտի սրունքի անջատած մկանի վրա:

Արյան օրջանառությունը (9—10 ժամ)

Արյան շրջանառության նշանակությունն օրգանիզմի համար: Արյան շրջանառության հայտնաբերումը: Սերվետի վախճանը, վորին կալվինն այրեց խարուկի վրա արյան շրջանառության փոքր շրջանը հայտնագործելու համար:

Արյան բաղադրությունը: Պլազմա և ձևավոր տարրեր: Ածխածին գազի և թթվածնի փոխադրությունն օրգանիզմի մեջ: Արյան կարմիր և սպիտակ մարմնիկները և նրանց նշանակությունը: Արյան մակարդման նշանակությունը: Գաղափար էր մունիսետի մասին:

Սրտի կազմությունը: Ջարկերակներ: Յերակներ: Մազանոթներ: Նրանց նշանակությունը: Արյան և ավշի շրջանառության ընդհանուր սքեմը: Ավշի առաջացումը: Նյութերի փոխանակությունն արյան և ավշի միջև: Արյունն ու ավիշը վորպես միջալայր բջիջներ և հյուսվածքների համար: Սրտի աշխատանքը և օրգանների արյունով լցվելը օրգանիզմի հանգստի և զանազան գործունեյության ժամանակ: Սրտի մարզանքի նըշանակությունը: Սրտի գերհոգնածությունը և այն կանխելու միջոցներ:

Լաբորատոր պարապմունքներ և դեմոնստրացիաներ. 1) Պատրաստումն արյան քսուկի և դիտումն միկրոսկոպի տակ. 2) դիտումն միկրոսկոպի տակ արյան հոսանքի գորտի թաթաթաղանթի մեջ. 3) ստանալ Ֆիբրինոգենը կամ արյուն. 4) արյան գունավորման փոփոխվելը թթվածնի

ածխածին գազի ազդեցություն տակ. 5) ցուցադրում արյան շրջանառության տախտակի:

Շնչառություն (6—7 ժամ)

Շնչառության նշանակությունն օրգանիզմի համար:

Շնչառության օրգանների կազմությունը: Շնչառական շարժումների մեխանիզմն ու կարգավորումը: Ջայնական ապարատի կազմությունը և հարմարումը հոգաբաշխ խոսքի համար: Արեետական շնչառություն: Գաղափարանակությունը թոքերում և հյուսվածքներում: Թոքային ռեզպիրությունը և գաղափարանակությունը օրգանիզմի զանազան գործունեյության ժամանակ:

Առողջ ողը վորպես արդունավետ արտադրական աշխատանքի պայմաններից մեկը: Շնչառության օրգանների կազմությունն այն առանձնահատկությունները, վորոնց նշանակությունն է օրգանիզմը պահպանել թոքերում սառը ող, փոշի և միկրոբներ ընկնելուց:

Լաբորատոր պարապմունքներ և դեմոնստրացիաներ. 1) Ջննում և հերձում կաթնասուն կենդանիների թոքերի. 2) հայտնաբերումն ածխածին գազի արտաշնչած ողի մեջ. 3) ցուցադրումն շնչառության օրգանների նկարներ:

Սննդառություն (10—14 ժամ)

Սննդառության նշանակությունն օրգանիզմի համար:

Մարդու և կաթնասուն կենդանիների սննդառության օրգանների կազմության մեջ յ՛դամ նմանությունն ու տարբերությունը: Այդ նմանության նշանակությունը՝ մարդու աստվածային առանձին ծավման մասին չեղած կրոնա-իդեալիստական պատկերացման դեմ պայքարի գործում:

Սննդարար նյութերի հիմնական խմբերը (սպիտակուցներ, ճարպեր և ածխաջրեր): Ջուր: Աղեր:

Մարսողական գեղձեր: Մարսողության օրգանների Ֆերմենտները: Կերակրի շարժումը մարսողության խոզովակով: Կերակրի փոփոխվելը մարսողության խոզովակի տարբեր բաժիններում: Գաղափար մարդու և կենդանիների մարսողական գեղձերի աշխատանքների ուսումնասիրության մեթոդների մասին: Պրզանիզմ մտնող նյութերի (սպիտակուցների, ճարպերի, ածխա-

ջրերի) ձձվելը: Ծծված նյութերի յուրացումը: Գաղափար սըն-
ման նորմաների մասին: Եներգիայի որական ծախսը մարդու
որգանիզմի կողմից՝ հանգստի վիճակում: Աշխատանքային հավե-
լում: Մնման առողջապահության ֆիզիոլոգիական հիմունքները:

Լաբորատոր պարապմունքներ և դեմոնստրա-
ցիաներ. 1) Հերձումն կաթնասունի կամ գորտի և դիտում
մարսողական սիստեմի. 2) հայտնաբերումն սպիտակուցների
ճարպերի, ածխաջրերի՝ անդամթերքների մեջ. 3) թքի, ստամոք-
սային հյութի և յեղթաստամոքսային գեղձի հյութի մարսողա-
կան ազդեցությունը. 4) ցուցադրում մարսողական որգանների
նկարների:

Սրտաթորում (4—5 ժամ)

Արտաթորման նշանակությունն որգանիզմի համար:

Նյութափոխության վերջնական արդյունքները և նրանց
արտաթորումը: Մեզի գոյացման պրոցեսը: Միզատար որգան-
ները: Մակի կազմությունը: Մաշկը վորպես արտաթորման և
ջերմակարգավորիչ որգան: Ջերմատրումը մաշկի միջոցով բա-
րեխառնության և խոնավության զանազան պայմաններում:
Թույներ՝ մաշկի միջով որգանիզմը թափանցող: Ռազմական
թունավոր նյութեր:

Լաբորատոր պարապմունքներ և դեմոնստրա-
ցիաներ. 1) Հերձում կաթնասուն կենդանու յերիկամի. 2)
մաշկի լանկի կտրվածքը միկրոսկոպի տակ. 3) նկարներ ար-
տաթորման գործարանների և մաշկի կազմություն:

Նյարդային սիստեմ (16—20 ժամ)

Նյարդային սիստեմի նշանակությունն որգանիզմի համար:

Նյարդային սիստեմի կազմությունը. կենտրոնական, պե-
րիֆերիկ և վեգետատիվ նյարդային սիստեմ: Նմանությունը և
տարբերությունը մարդու և վողնաշարավոր կենդանիների նյար-
դային սիստեմների կազմության:

Գաղափար ներոնի մասին: Նյարդային հյուսվածքի հատ-
կությունները (գրգռականությունն ու հալոդրականությունը):
Գաղափար վեգետատիվ նյարդային սիստեմի մասին: Ներքին
որգանների խնամքի պայման: Վոլյուտեղի կազմությունը: Ռեֆ-
լեքսային աղեղ: Վոլյուտեղային ռեֆլեքսներ: Ուղեղի բունը՝
յերկայնաձիգ ուղեղ, միջին ուղեղ: Փոքր ուղեղ: Մեծ կիսագնդեր:

Գաղափար բարդ ռեֆլեքսների մասին: Գայլը վորպես
որինակ բարդ ռեֆլեքսային գործունեություն: Պատկերացում
բնազդների՝ վորպես բարդ ռեֆլեքսների՝ մասին: Ուղեղի մեծ
կիսագնդերը վորպես բարձր նյարդային գործունեությունն որ-
գաններ: Պայմանական ռեֆլեքսները և արգելակում: Պայմա-
նական ռեֆլեքսների նշանակությունը կենդանիների կյանքում:
Մարդու պայմանական ռեֆլեքսները: Մարդու բարձր նյարդային
գործունեության առանձնահատկությունը: Մարդու գիտակցու-
թյան սոցիալական պայմանավորվածությունը: Կրոնի ուս-
մունքի դասակարգային եյությունը՝ «հոգու» և անդրգրեկմա-
նային կյանքի գոյություն մասին: Մեծերի հարությունն
առնելու առասպելը: Ջգայարանները և նրանց դերն որգանիզ-
մում: Տեսողության որգան: Ցանցաթաղանթը վորպես ընդունող
նյարդային ապարատ: Լսողության որգանը, Կորտյան որգանի
դերը: Հոտառության, ճաշակելիքի, շոշափելիքի որգանները:
Մկանային զգայություն:

Լաբորատոր պարապմունքներ և դեմոնստրա-
ցիաներ. 1) Նյարդային հյուսվածքի հատկությունների ցու-
ցադրումը գորտի անդամատած նյարդի վրա. 2) վոլյուտե-
ղային ռեֆլեքսի ցուցադրումը գլխատված գորտի վրա. 3) հեր-
ձում կաթնասուն կենդանու աչքի. 4) ցուցադրումն նյարդային
սիստեմի նկարների և ուղեղի, ականջի, աչքի մոդելների:

Ներգատում (5—7 ժամ)

Գաղափար ներգատական (ներքին սեկրեցիայի) գեղձերի
մասին: Վահանաձև, կտնաքի գեղձեր, ուղեղային հավելված,
սեռական գեղձեր, մակյերիկամներ, նրանց դերն որգանիզմում:
Ներգատական գեղձերի հեռացման փորձերը կենդանիների մոտ:
Փոփոխություններ մարդու որգանիզմում՝ կապված ներգատա-
կան առանձին գեղձերի նորմալ գործունեության խանգարման
հետ: Կապը ներգատական գեղձերի միջև: Ներգատական գեղձ-
րի ուսումնասիրության բնագավառում ձեռք բերված նվաճում-
ները և նրանց պրակտիկ նշանակությունը բժշկության և ա-
նասնաբուժության մեջ:

Ներքին սեկրեցիայի ուսմունքի նշանակությունը կրոնի և
իդեալիզմի դեմ մղվող պայքարում:

Ցուցադրում վահանաձև և սեռական գեղձերի՝ հերձած կաթ-
նասունի վրա:

**Նյութերի փոխանակութիւնը մարդու
որգանիզմում (5—8 ժամ)**

Նյութերի փոխանակութիւնի ընդհանուր պատկերն որդանիզմում: Աստիմիլացիան և դիստիմիլացիան վորպես միևնույն պրոցեսի՝ որդանիզմում կատարվող նյութերի և եներգիայի փոխանակութիւնի յերկու փոխադարձաբար հակադիր կողմերը: Ֆերմենտների դերը նյութերի փոխանակութիւնի մեջ, Հյուսվածքային շնչառութիւն: Նյութերի փոխանակութիւնը վորոշելու հիմնական յեղանակներն որդանիզմում: Խանգարումներ որդանիզմում՝ կապված նյութերի փոխանակութիւնի խանգարման հետ (հիպերտրոֆիա, ճարպակալում, հյուծում), Նյարդային և հումորալ ներգործումները նյութերի փոխանակութիւնի վրա:

Անող որգանիզմի Քիզիոլոգիան (4—6 ժամ)

Զլարջիջ: Սերմնորդ: Բեղմնավորութիւն: Ներարգանդային կյանք: Մարդու և կենդանիների սաղմի զարգացման առարն ստադիաների նմանութիւնը: Կնոջ որդանիզմում տեղի ունեցող փոփոխութիւնները՝ կապված հղութիւնի հետ:

Զարգացման առանձնահատկութիւնները մանկական և դեռահասական հասակում: Սննդառութիւնը մանկական և դեռահասական հասակում: Սեռական հասունութիւնի շրջանը և նրա առանձնահատկութիւնը: Որդանիզմի ներքին սեկրետորական գործունեութիւնը մանկական հասակում և սեռական հասունութիւնի շրջանում:

Երսկուրսիա դեպի սանլուս կամ մայրութիւն ու մանկութիւնի թանգարան՝ ծանոթանալու մարդու սաղմային զարգացման հետ:

Կրկնութիւն և ամփոփումներ (7—12 ժամ):

ԻՆՆԵՐՈՐԴ ԴԱՍԱՐԱՆ

ԵՎՈՂՈՒՑԻՈՆ ՈՒՍՄՈՒՆՔԻ ՀԻՄՈՒՆՔՆԵՐԸ (84—108 ժամ)

Քացաքագիւր

Իններորդ դասարանի դասընթացը՝ «Եվոլուցիոն ուսմունքի հիմունքները» — կառուցվում է աշակերտների վոջ լրիվ միջնակարգ դպրոցում ուսումնասիրած բուսաբանութիւնի և կենդանաբանութիւնի դասընթացների վրա:

Այդ դասընթացների ուսումնասիրութիւնը պետք է կոնկրետ դիտելիքների բավականաչափ պաշար տա աշակերտներին՝ եվոլուցիոն ուսմունքի դասընթացում աշխատելու համար: Իններորդ դասարանի աշակերտների հասակը լիովին հետաքրքրութիւն է ապահովում դեպի այդ դասընթացի հիմնական հարցերը և լիպատար հնարավորութիւն է տալիս անցնել այն բավականաչափ խորը:

Տրվելիք գիտելիքներն անհրաժեշտ է որդանապես կապել առցիալիստական շինարարութիւնի պրակտիկայի հետ, հարկավոր է ուսման նյութի բովանդակութիւնը տալ վորոշ քաղաքական ուղղվածութիւն, ծավալել՝ աշակերտների ըմբռնողութիւնի համար մատչելի կոնկրետ որինակներով որդանական աշխարհի դարգացման մասին՝ ժամանակակից բուրժուական թորիաներում գոյութիւն ունեցող կրոնական, իդեալիստական և մեխանիկական խեղաթյուրումների քննադատութիւնը՝ մերկացնելով նրանց դասակարգային երութիւնը:

Անհրաժեշտ է աշխատանքը կառուցել այնպես, վոր ծրագրակերտներն իրենք հենց ուսումնական աշխատանքի ընթացքով մոտենան բնութիւնի դիալեկտիկորեն զարգացող որինքներին՝ հատնաբերմանը և գիտութիւնի դասակարգային լինելու ըմբռնմանը:

Մրագրային նյութի յուրացման համար անհրաժեշտ է աշխատանքի ընթացքում լայնորին ոգտագործել լավ ընտրված գիտողական պիտույքները (պրեպարատներ՝ կոլեկցիաներ, նըկարներ, դիապոզիտիվներ, կինո, կենդանի նյութ): Անհրաժեշտ է ապահովել յուրաքանչյուր թեմայի համար ծրագրում նշված երսկուրսիաների, լաբորատոր պարապմունքների և դիմոնստրայիաների մրնիմումը: Անհրաժեշտ է ամուլա ընթացքում պատրաստել ուսման տարվա սկզբին համար հարկավոր կենդանի և բաշխման նյութը:

ՄՐԱԳԻՐ

I ՆԵՐԱԾՈՒՐՅՈՒՆ (4—6 ժամ)

Նախադարվիւնայն շրջանի բիոլոգիայի ընդհանուր բնութագիրը: Կրոնա-գողմատիկ պատկերացումները «ստեղծագործութիւնի բանական պլանի և կենդան բնութիւնի անփոփոխականութիւնը»:

թյան մասին: Աստվածաշնչի ուսմունքի քննադատութիւնը՝ որգանական ձևերի անփոփոխականութեան մասին: Լիննեյն ու նրա ուսմունքը ստեսակի մասին: Լիննեյան դասակարգութեան սկզբունքներն ու հիմունքները: Լիննեյի հայացքների փոխվելը տեսակների անփոփոխութեան նկատմամբ նրա գիտական գործունեութեան վերջում: Դրա պատճառները:

Բիւրոգիան XIX դարում: Եվրոպեցիոն գաղափարները XIX դարում մին և Դարվին: Լամարկի, ժ. Ս. Իլերի, Կյուվիեյի ուսմունքների հիմունքները: Համառոտ ընթացիկ Կյուվիեյի կատաստրոֆների տեսութեան, վոր քողարկում եր աշխարհի ստեղծագործութեան կրօնական ուսմունքը:

Հասարակական-պատմական և սոցիալ-տնտեսական նախադրյալները՝ դարվինիզմի ծագումը պայմանավորող (կապիտալիզմի արմատացումը գյուղատնտեսութեան մեջ և ագրարային հարաբերութիւնների փոխվելն Անգլիայում XIX դարի կիսին, առևտրի, ճանապարհորդութեան զարգացումը, լեռնարդյունադործութեան և յերկրաբանութեան զարգացումը, բնագիտութեան վրձակը XIX դարում):

II. Դարվինիզմ (36—42 ժամ)

1. 2. Դարվինի սեսուլիան հիմնական դրուլքները (16 ժամ)

Փոփոխականութիւնը կուլտուրական բուսերի և ընտանի կենդանիների մոտ: Արհեստական ընտրութեան (սիստեմատիկ ընտրութեան) ելութիւնը տնտեսապես արժեքավոր ժառանգական փոփոխութիւնների՝ մի շարք սերունդների ընթացքում: Նոր ձևերի առաջացումը բնութեան մեջ բնական պայմաններում: Որգանիզմների բազմացման ինտենսիվութեանը և վերապրող հասուն անձանների աննշան քանակը:

Գոյութեան կոմի. Գոյութեան կ. վի գանաղան ձևերը, ա) ներտեսակային, բ) միջտեսակային, գ) պայքար անորգան բնութեան ուժերի դեմ: Ներտեսակային գոյութեան կ. վի ամենամեծ ինտենսիվութիւնը:

Բնական ընտրութիւնը վորպես ամենից ավելի հարմարվածների վերապրում՝ գոյութեան կ. վի հետևանքով: Բնական ընտրութեան գործողութեան մեխանիզմը: Բնական ընտրութեան համեմատութիւնը արհեստականի հետ: Բնական ընտրութեան փորձնական ուսումնասիրութիւնը:

Որգանական աշխարհի ծագման պատմականութիւնն ու ազգակցութիւնը՝ ըստ Դարվինի տեսութեան: Եվրոպեցիան և հարմարվածութիւնը գոյութեան զանազան պայմաններին կենդանական և բուսական աշխարհում: Գունավորման բիւրոգիական տիպերը կենդանիների մոտ (հովանավորող, սպանական, նախազգուշացնող, միմի բիս), սիմբիոզ. պարզաիզմ և այլն: Նպատակահարմարութեան յերևույթների կրօն-մետաֆիզիկական մեկնաբանութիւնը և նրա սնանկութիւնը: Որգանիզմների նպատակահարմարութեանը վորպես արդիւնք բնական ընտրութեան: Այդ նպատակահարմարութեան հարաբերական բնույթը: Նպատակահարմարութեան յերևույթների ըստ Դարվինի և ըստ Լամարկի բացատրութիւնների համեմատութիւնը: Դարվինիզմի նշանակութիւնը որգանական աշխարհի նպատակահարմարութեան յերևույթների կրօնատիպի գեալիստական մեկնաբանութեան դեմ պայքարի գործում:

Ձևերի խոտորումը, միջակողակների մահացումը և նոր տեսակների առաջացումը: Աշխարհագրական ու բիւրոգիական մեկուսացման նշանակութիւնը տեսակառաջացման պրոցեսում: Տեսակի և փոփոխակի միջև ճիշտ տարրերութիւն սահմանելու անհնարնութիւնը: Տեսակառաջացման դարվինյան սխեմայի տարածումը կարգաբանական ավելի բարձր խմբերի՝ սեւերի, ընտանիքների և այլոց վրա:

Եքսուլերսիա դեպի բնութիւն կամ թանգարան՝ ուսումնասիրելու բնական ու կենդանական որգանիզմների կարգաբանական խմբերի բազմազանութիւնը, կենդանիների և բույսերի հարմարվածութիւնները շրջապատող միջավայրին, գիտելու, գոյութեան կ. վի և բնական ընտրութեան արդիւնքները:

2. Որգանական աշխարհի զարգացումը հաստատող փաստեր (16 ժամ)

Փամանակակից ուսմունքի հիմունքները տեսակի մասին: Համեմատութիւնը Լիննեյի ուսմունքի հետ: Բնական սիստեմը վորպես արտացոլում որգանական աշխարհի եվոլուցիայի:

Համեմատական անատոմիական հետազոտութիւնները սվյալները: Գաղափար հոմոլոգ և անալոգ որգանների մասին: Հոմոլոգ որգանների նշանակութիւնը որգանիզմների միջև յեղած ազգակցական կապերը հաստատելու գործում: Գաղափար

կոնվերգենցիայի մասին և նրա բացատրութիւնը Դարվինի տեսութեամբ: Մնացորդ (ուղիմենտ) որգաններ: Մնացորդ որգանների բացատրութիւնը Դարվինի տեսութեամբ: Հասեմատական անատոմիայի տվյալների նշանակութիւնը՝ «մարդու մեծարանքի» կրոնա-իդեալիստական պատկերացման դեմ պայքարի գործում:

Որգանիզմների անհատական զարգացման (ոնտոգենիայի) ուսումնասիրութեան նշանակութիւնը՝ որգանիզմների տեսակալին (Ֆիլոգենետիկ) զարգացման պրոբլեմին ճիշտ մոտենալու համար: Վոլնաշարավորների սաղմերի համեմատութիւնը: Մյուսլեր-Հեկեկի բիոգենետիկ որոնքը: Որգանական աշխարհի սաղմնային զարգացման նմանութիւնը: Բիոգենետիկ որոնքի քննախոսումը ժամանակակից գիտութեան կողմից, ժամանակակից ձևակերպումով բիոգենետիկ որոնքի արժեքը՝ ոնտոգենիայի և ֆիլոգենիայի փոխադարձ կապն ըմբռնելու համար:

Հնեաբանութեան տվյալները: Բրածո մնացորդները և ներքանց պահպանման պայմանները յերկրի կեղևում: Կյանքի զարգացման ընդհանուր պատկերը՝ սկսած եոզոյան երաշխի մինչև ժամանակակիցը: Հավաքական և անցման բրածո ձևեր: Ձևերի հնեաբանական շարքերը (սմբակավորների և կնճիթավորների որինակների վրա): Որգանական աշխարհի ծննդաբանական ծառերը:

Բիո-աշխարհագրական տվյալները: Ֆլորայի և ֆաունայի ժամանակակից բաշխումը վորպիս արդյունք յերկրի գեմքի յերկրաբանական փոփոխութիւնների և որգանիզմների եվոլուցիայի: Ախտորայիայի և Նոր-Ձեղանդիայի կաթնասունների «կենդանի բրածոների» պրիմիտիվ ձևերը: Բնական մեկուսացման նշանակութիւնը մեոնոզ ձևերի պահպանման համար:

Յեկեղեցականների և արդի բուրժուական գիտնականների փորձերի դասակարգային ելութիւնը՝ գիտութեան տվյալներով հիմնավորելու վեցորդա ստեղծաբործութեան կրոնական առասպելը:

Հաբորատոր պարապմունքներ, դեմոնստրացիաներ. 1) Համեմատութիւնը դպրոցում յեղած վոլնաշարավոր կենդանիների զանազան կարգերի ներկայացուցիչների ամբողջական կմախքների և վերջավորութիւնների կմախքների կազմութիւնների 2) ցուցադրում կենդանիների առանձին ներկայացուցիչների ուղիմենտների, որինակ՝ մասների մնացորդները սմբակավորների վերջավորութիւնների վրա, կատվի ու-

ղիմենտային կարիչները, մոդեսի յերրորդ՝ զագաթնային կոչված աչքը և այլն. 3) դիտում միկրոսկոպով և խոշորացուցով արիտոնի, գորտի, միջատների ձվերի ու սաղմերի. 4) բիո-աշխարհագրական տվյալներն ուսումնասիրելիս՝ ցուցադրել կենդանու աշխարհագրական քարտեզ-տախտակներ. 5) հնեաբանական տվյալներն ուսումնասիրելիս՝ ցուցադրել բրածո մնացորդների կամ եքսկուրսիա կատարել դեպի տեղական թանգարանի համապատասխան բաժինը:

3. Դարվինի գլխի նշանակութիւնը (4 ժամ)

Մարքսիզմի հիմնադիրների տված գնահատականը դարվինիզմին: Դարվինիզմը վորպիս ուսմունք, վոր հիմնականում իշտ բացահայտեց որգանական աշխարհի զարգացման որոնքները և բիոլոգիան զրեց գիտական հողի վրա:

Մատերիալիստական դիալեկտիկայի տարերային բնույթը դարվինիզմի մեջ:

Դարվինիզմի նշանակութիւնը բնութեան վրայ յեղած կրոնա-իդեալիստական հայացքների դեմ մղվող պայքարում: Մերկացումն տերտերական ստի՝ Դարվինի կրոնականութեան մասին:

Դարվինիզմի շուրջը մղվող դասակարգային պայքարը:

Վիտալիստական հակադարվինյան շարժման ուժեղացումը կապիտալիստական յերկրներում՝ կապված կապիտալիզմի ժամանակակից ճգնաժամի հետ: Կադախար նեոլամարկիզմի մասին և նրա սեպկցիոն ելութիւնը: Բուրժուական գիտութեան փորձը՝ նրա սեպկցիոն ելութիւնը: Կապիտալիստական հասարակութեան մեջ կիրառել դարվինիզմը կապիտալիստական հասարակութեան մեջ յեղած անհավասարութիւնն արդարացնելու համար: «Սոցիալա-կան դարվինիզմի» սեպկցիոն դասակարգային ելութիւնը և գիտական սնունդութիւնը: Կ. Ե. Տիմիրյազևի դերը դարվինիզմի պրոպագանդայի և հակադարվինիստների դեմ պայքարի գործում:

III Փոփոխականութեան յեվ ժառանգականութեան ուսմունքի իմունգները (22—28 ժամ)

Կադախար ժառանգական և վոչ ժառանգական փոփոխականութեան մասին (մուտացիաներ և մոդիֆիկացիաներ): ժառանգականութեան նյութական հիսունքները: Սեռական

ցեղի կուրտուրայի զարգացման ավելի բարձր աստիճանը (վերին պլեյսթոցեն) համեմատած նախորդների հետ:

Մարդկալին ժամանակակից ցեղերի միասնու-
թյունը: Նախամարդու առանձին խմբերի զարգա-
ցումը յուրահատուկ բնական և սոցիալ. տնտեսա-
կան պայմաններում. այդ խմբերի հետագա լուսու-
նումը գաղթումների ժամանակ:

«Բարձր» և «տորին» ռասսաների վերաբերյալ
կրոնական հեքյաթները և կեղծ գիտական տեսու-
թյունների ոգտագործումը բուրժուազիայի կող-
մից՝ իր շահագործող գաղութային քաղաքական-
նությունն արգարացնելու համար:

Դասակարգային պայքարի շարժիչ ուժը դասակարգային
մարդկային հասարակության զարգացման մեջ: Գոյության կրու-
զի գարվինյան որենքի՝ մարդկային հասարակության վրա փո-
խադրելու անթուլլատիլիությունը: Սոցիալական դարվինիզ-
մի, լեվգենիկայի և բուրժուական ռասսայական տեսությունների
անակցիոն դասակարգային ելությունը:

«Մարդու ծագումը» թեմայի հակակրոնական և քաղաքա-
կան նշանակութունը:

Հաբորատոր պարապմունքներ, դեմոնստրա-
ցիաներ, եքսկուրսիաներ. 1) Համեմատություն մարդու և
վոզնաշարավոր կենդանիների (առանձնապես կաթնասունների)
մարմնի կազմության տիպի. 2) գիտումն ուղեմեծնտար որպան-
ների. 3) եքսկուրսիա դեպի մարդարանական թանգարան (վոր-
տեղ թանգարանի հաստատասխան բաժնիներ չկան, եքսկուրսիա
կատարել դեպի յերկրագիտական թանգարան՝ նախամարդու
անխելկան ուսումնասիրելու համար):

Կ Ելանքի ծագումը յերկրի վրա (8-10 ժամ)

Իգեալիստական և մատերիալիստական հայացքը կյանքի
մասին: Կրոնի ուսմունքի դասակարգային ելությունը կյանքի
սկզբնավորության և ելության մասին: Ինքնաձևության գաղա-
փարը և պայքարը նրա մեկնարանության մեջ չեղած վուլգար
պատկերացումների դեմ: Հարվիյի աշխատանքները: Ռեդիի և Կ.
Պաստյորի փորձերը: Տեսություններ կյանքի հավիտենականու-
թյան մասին, նրանց իգեալիստական ելությունն ու սնանկու-

թյունը: Միևնուխտական հիպոթեզներ կյանքի ծագման մասին:
Կյանքի սկզբնական ձևերի հիմնական հատկությունները: Ժա-
մանակակից քիմիա-բիոլոգիական հիպոթեզը կյանքի ծագման
մասին: Բարդ որպանական միացությունների արհեստական
սինթեզի նշանակութունը՝ կյանքի նյութականությունը և հա-
տուկ «կենսական ուժի» մասին յեղած կրոնա-իդեալիստական
ուսմունքների սնանկությունն ապացուցելու համար:

Հաբորատոր պարապմունքներ և դեմոնստրա-
ցիաներ. ա) Փորձեր, վորոնք լուսաբանում են, թե չի կարելի
կյանքի բնորոշ հատկանիշ ընդունել այն շարժումը, վոր հասկաց-
վում է վորպես պարզ տեղափոխություն տարածության մեջ:
Որինակ՝ դիտել անդիկի կաթիլների շարժումը: Շարժումն ուժե-
ղացնելու համար կաթիլ-կաթիլ ավելացնել ազոտաթթու և վրան
ցանել կալիում քրոմատի հատիկներ: Ել ավելի պարզ փորձեր
են հանդիսանում ջրում կամֆորայի կտորների շարժումները,
վոր առաջանում են ջրի և կամֆորայի սահմանում մակերեսա-
յին լարման տարբերության հետևանքով կամ յուղի կաթիլի
շարժումը սողալի թույլ լուծույթում:

բ) Զուգընթացաբար դիտել յերկրորդ յերևույթը, վոր լու-
սաբանում է, թե չի կարելի կյանքի բնորոշ հատկանիշի տեղ
ընդունել այն աճը, վոր հասկացվում է վորպես ծավալի պարզ
մեծացում Ֆիդիկաքիմիական պրոցեսների հետևանքով առա-
ջացած: Պղնձարջասպի լուծույթի մեջ գցել յերկաթ կալիումային
ցիանատի աղի բյուրեղներ (դեղին արյան աղ):

Ժամանակակից պայմաններում կյանքի ինքնաձևության
անկարելիության վերաբերյալ հարցն ուսումնասիրելիս պետք է
դնել Պաստյորի պարզաբար բոլոր դասագրքերում հայտնի
փորձերը: Պետք է շեշտել, վոր Պաստյորի փորձերն ոգտագործե-
ցին վիտալիստները վորոնք նրանց տալով լայն մեկնարանու-
թյուն, ոգովիցին նրանցով կյանքի հավիտենականության տե-
սությունը հիմնավորելու համար:

Հաշվի առնելով այդ պրոբլեմի բարդությունը, ծրագրին
առաջարկում է աշակերտներին մոտեցնել հետևյալ յեղրակացու-
թյուններին:

1) Կյանքը հավիտենապես չի գոյություն ունեցել և յերկրի
վրա յերևացել է վոչ թե ստեղծագործական ախտի հետևանքով,

ինչպես այդ մասին սովորեցնում ե կրօնը, այլ անկենդան նյութի զարգացման հետևանքով՝ ստեղծված բարենպաստ արտաքին պայմանների շնորհիվ:

2) Կյանքը հնարավոր ե արտաքին միջավայրի վորոշ պայմանների առկայութեամբ:

3) Պետք ե բանալ աշակերտների առջև կյանքի հավիտենականութեան մասին յեղած հիպոթեզի ուսուցիչին-վիտալիստական ելութունը և ցուցց տալ հարցի մեխանիստական պարզեցման դեմ սայթաքի անհրաժեշտութեանը:

«Կյանքի ծագումը» թեմայի մշակման հիմնական մեթոդը պետք ե հանդիսանա դասախոսութեան-զրույցը, վորն ամրապնդվում ե դասագրքի վրա աշխատելով:

Կրկնութեան (4—8 ժամ):

ՔԻՄԻԱ *

ՅՈՒԹԵՐՈՐԴ ԴԱՍԱՐԱՆ (80—86 ժԱՄ)

Բացատրագիր

Ներկա ծրագրի հիմքում դրված ե միջնակարգ դպրոցի V I դասարանի ծրագիրը, վորը 1932 թվին հաստատված ե Լուսժողկոմատի կողմից: Այդ ծրագիրը չենթարկվեց աննշան փոփոխութեանների և լրացումների՝ կապված այն բանի հետ, վոր քիմիայի դասընթացը վեցերորդ դասարանից տեղափոխված ե թիմիայի դասընթացը վեցերորդ դասարանից, վոր վոր լիվ միջնայութեանը, և այն անհրաժեշտութեան հետ, վոր վոր լիվ միջնակարգ դպրոցից դուրս յեկող աշակերտներին պետք ե տալ քիմիական սկզբնական գիտելիքների քիչ թիւ շատ լիավարող ծագումը: Միջնակարգ դպրոցում քիմիայի ամբողջ դասընթացի հիմնական խնդիրներն ուրվագծած են միջնակարգ դպրոցի ծրագրի, բացատրագրի մեջ (տես ներքեում):

V II դասարանում քիմիայի դասընթացի հիմնական խնդիրները հետեյալներն են.

1) Ապահովել գիտելիքների վորոշ դասընթացի յուրացումը, վորի հիման վրա դպրոցի հետագա ոլախներում (միջնակարգ դպրոցի բարձր դասարաններ, տեխնիկումներ) կարելի կլինի դասընթացը կառուցել:

Այդ գիտելիքներն աշակերտներին պետք ե հնարավորութեան տան ըմբռնելու քիմիական յերևույթները շրջապատող բնութեան մեջ, արտադրութեանում և կենցաղում: Սրանց են վերաբերում հետևալ հարցերի շուրջը յեղած գիտելիքները՝

*) Ծրագիրը կաղմելուն մասնակցել են պրոֆ. Վ. Ն. Վերխովսկին, Պոլիտեանիկ կրթութեան կենտրոնական գիտահետազոտական ինստիտուտի տվագ գիտական աշխատողներ՝ Կ. Յա. Պարմենովը և Լ. Մ. Սյուրչոնսկին, Վ. Ս. Գորչեչնիովը և Դ. Մ. Կլբյուշկինը:

ա) հիմնական քիմիական որոնքները (նյութերի կշռի պահպանման և բաղադրություն կայունություն) և հասկացողությունները (քիմիական ու ֆիզիկական յերևույթներ, խառնուրդ և միացություն, տարրալուծման, միացման և փոխարինման ակցիա)։

բ) առաջին հասկացողությունները ելեմենտի և պարզ նյութի մասին, ատոմ-մոլեկուլային ուսմունքի մասին, վալենտականություն մասին։

գ) ջուրը և նրա հատկությունները, ջրի փոքրահասակ և քանակական բաղադրությունը, թթվածինը և ջրածինը, նրանց հատկությունները և ստանալու յերկանակները, ոգր և նրա կազմությունը, ազոտ և ածխածինը, առաջին պատկերացումը, ոքսիդացման և վերականգնման ռեակցիաների մասին, բուրբենություն մասին և հանրելից յերկաթ ստանալու մասին։

դ) ռեպրոդուկցիա, հիմքեր, թթուներ, աղեր, միացություններ, ալգ կարգերի ամեն ցավելի կարևոր ներկայացուցիչները կծու նատրիում, կծու կալիում, կիր, թթուներ՝ ծծմբական թթու, աղաթթու և ազոտական թթու), աղերի առաջացման յերկու պարզագույն զեպերը։

2) Տալ առաջին հասկացողությունը քիմիայի նշանակություն մասին սոցիալիստական շինարարության շեջ։

3) Տալ առաջին ունակություններն ու կարողությունները՝

ա) հասկանալ քիմիական ֆորմուլները, կարողանալ գիտակցորեն կազմել պարզագույն ֆորմուլներ ու հավասարումներ և նրանցով կատարել պարզ հաշվումներ։

բ) կարողանալ վարվել քիմիական ամանեղենի, շտապիկների, այրոցների (սպիրտայրոցների), զեղագործական կշեքի և կշեքարների հետ, կազմել պարզ սարքավորումներ, ռեակտիվների հետ վարվել, ինչպես նաև կատարել պարզագույն գործողություններ, ալն և՛ ֆիլտրների պատրաստում, ֆիլտրում, գոլորշիացում, գազեր ստանալը և հավաքելը՝ պահպանելով անհրաժեշտ նախագուշտությունները։

գ) կարողանալ ոգտվել փորձից՝ պարզ հարցեր լուծելու համար, կարողանալ դիտողությունների և փորձերի արդյունքները և արդյունքներից հանած յեզրակացությունները բանավոր ու գրավոր ձևով հակիրճ և բանիմացորեն ձևակերպել։

դ) կարողանալ կարգալ գործիքների գծագրերը և գրագետ կերպով նկարել պարզ գործիքներն ու սարքավորումները։

Այդ խնդիրներն իրականացնելու նպատակով դասատունը իր աշխատանքի ընթացքում պետք է շարունակ նկատի առնի հետևյալ մեթոդական պահանջները։

1) Քիմիայի ուսուցումը պետք է անցնի պլանաչափորեն տարվող դիտողությունների և փորձերի հիման վրա։ Ճրագրում թված լաբորատոր աշխատանքների ու դեմոնստրացիաների կատարումը պարտադիր է։ Խոսք կարող է լինել միայն այդ փորձերն ուրիշ, նման փորձերով փոխարինելու մասին, չիթե նրանք չեն կարող կատարվել սարքավորման պայմանների պատճառով կամ այլ պատճառներով։

2) Բոլոր հիմնական հասկացողությունների և որոնքները ձևակերպմանը պետք է նախորդի կոնկրետ փաստերի քննարկումը։ Սահմանումները պետք է մոցնել միայն այն բանից հետո, յերբ դասատուն հավատացած է վոր տվյալ սահմանումի կյությունը բոլոր աշակերտները կարող են հասկանալ, նախորդ ուսումնասիրությունների ամբողջ ընթացքից։ Հասկացողությունները կամ որոնքները պետք է միշտ կիրառվեն հետագա ուսումնասիրությունների ընթացքում և առանձին ստադիաներում պետք է ընդարձակվեն ու խորացվեն։

3) Տեսական հարցերը պետք է շարադրվեն աշակերտները քմբոնողությունը մատչելի ձևով։

4) Քիմիական լեզվի ուսումնասիրությունը չպետք է հանդիսանա ինքնանպատակ և հանի ֆորմուլներ ու հավասարություններ անիիր անելուն։ Ծրագրում ցույց են տրված քիմիական լեզվի ուսուցման առանձին ետապները։ Քիմիական լեզվով անչնորհք և անժամանակ կերպով ոգտվելը հաճախ աշակերտների ձեջ ստեղծում է կեղծ պատկերացում քիմիայի մասին, վորպես «դժվար» առարկա։

5) Ուսումնական նյութի շարադրման ընթացքում ցանկալի է համապատասխան տեղերում ոգտագործել քիմիայի պատմությունից ամենից ավելի փալուն մոմենտները, բայց վոչ թե պատմական տեղեկությունների ձևով, այլ վորպես հենք՝ գասունթացի կառուցման համար։

6) Աշակերտների հետ իր աշխատանքի ընթացքում դասատուն պետք է քիմիայի փաստական և տեսական նյութը կապի սոցիալիստական շինարարությունից պրակտիկայի հետ, հատկապես քիմիական արդյունաբերությունից բնագավառում։

7) Մի ընդհանուր ծրագրում չեն կարող նախատեսված

լինել տեղային մոմենտները: Բայց նրանք պետք է տեղ գրտո-
նեն դպրոցի գործնական աշխատանքի ժամանակ: Իսասականա-
ման մեջ անհրաժեշտ է ոգտագործել տվյալներ տեղական քի-
միայան արտագրութունների մասին, քիմիական հումքի մո-
տակա հանքավայրերի մասին և այլն:

Իստընթացի առանձին թեմաների վերաբերմամբ մեթո-
դական ցուցմունքներ տվյալ գրության մեջ չի տրվում, քանի
վոր նրանք արտացոլում են գտել լույս տեսած մեթոդական
գրականության մեջ (ցուցակը տես VIII—X դասարանների ծը-
րագրի բացատրագրում):

ԾՐԱԳԻՐ *)

1. Նուրբերն ու նրանց փոխարկումը (§—8 ժամ)

Նյութերը և նրանց հատկությունները: Խառնուրդներ և
մաքուր նյութեր: Ֆիզիկական և քիմիական չիբույթներ: Տար-
բայութեան և միացման ուսուցիչներ: Գիմիական պրոցեսներ
որինակները շրջապատող բնության և արտագրության մեջ: Սո-
ցիալիստական անտեսութեան մեջ քիմիական արտագրության
ներքի և քիմիական գիտելիքների նշանակությունը մասին առա-
ջին հասկացողություն:

Լաբորատոր աշխատանքներ և դեմոնստրա-
ցիաներ. ա) զանազան նյութերի զննումը և նյութերի ամենա-
կարևոր հատկությունների հետ ծանոթացում լաբորատորիա-
յում լիզած նմուշներով. բ) խառնուրդների և մաքուր նյութե-
րի զանազանում. խառնուրդների բաժանման ամենապարզ ձևե-
րը պտոր լուծույթի նստեցում (որինակ՝ թեփի և ավազի),
լուծում, ֆլյարում և գոլորիացում (որինակ՝ կերակրի կեղ-
տոտ ազի մաքրելը), վորևե գունավորված քալին լուծույթի թո-
րելը. գ) ֆիզիկական և քիմիական փոփոխությունների որի-
նակներ՝ ապակե ձողի, ճենապակու կտորի, յերկաթի և պղնձե
թիթեղների կամ լարերի, մագնեզիումի ժապավենի, շաքարի
կտորի կամ պղնձարչապալի բյուրեղիկի տաքացումը. ա) նյութի
նյութերի լուծույթների խառնում, վորոնք փոխազդեցություն
դեպքում տալիս են անլուծելի կամ գունավորված նյութ և այլն:

*) Ընթացիկ հաշվածան համար անհրաժեշտ ժամանակը մոտավոր է
թեմային հատկացված ժամերը մեջ:

դ) պղնձի կարոնատի և անդիկի ոքսիդի տարբալուծումը. յե)
ծծմբի և յերկաթի խառնուրդը և միացութունը (կամ ծծմբի և
մի ուրիշ մետաղի):

2. Ջուր (§—8 ժամ)

1) Ջուրը բնութեան և արտագրության մեջ: Ջրի մաք-
րումը: Մաքուր Ջրի ֆիզիկական հատկությունները (կապ ֆի-
զիկաչի հետ):

2) Առաջին հասկացողությունը լուծույթների մասին: Նը-
րանց տարբերությունը պտոր հեղուկներից: Պինդ նյութերի
լուծույթները ջրում: Հագեցած և չհագեցած լուծույթներ: Լու-
ծելիություն: Լուծելիության կախումը ջերմաստիճանից: Նյու-
թերի արտագրումը լուծույթից ջերմաստիճանի փոփոխու-
թյան և լուծիչի գոլորչիացման դեպքում: Առաջին հասկացողու-
թյունը բուրեղային և ամորֆ վիճակի մասին: Հասկացողութուն
հեղուկների և գազերի լուծելիության մասին:

Լաբորատոր աշխատանքներ և դեմոնստրացիա-
ներ. ա) ջրի հետ խառնել ու թափահարել գործնականորեն
անլուծելի նյութեր (որինակ՝ բարիումի սուլֆատ և ավազ).
քիչ լուծելի (գիպս, կիբ) և լավ լուծելի (սելիտրա կամ պող-
լեզ, կերակրի աղ). քիչ լուծելի և անլուծելի նյութերի անջա-
տումը՝ ֆիլտրելով և ֆիլտրատը գոլորչիացնելով. բ) հագեցած
լուծույթներ ստանալը (որինակ՝ սելիտրաչի կամ պողլեզի, կե-
րակրի աղի) տաքացման ազդեցությունը լուծելիության վրա.
գ) սելիտրայի կամ պողլեզի բյուրեղների արտագրումը լու-
ծույթից՝ լուծույթը սառեցնելու դեպքում. դ) ջրի հետ յուղ
խառնելն ու թափահարելը և սպիրտի լուծվելը. յե) լուծված
ողի անջատումը ջրից (փորձը փորձանոթի մեջ):

3) Ջրի վորակական բաղադրությունը: Ջրի տարբալուծումն
ելիկտրական հոսանքով: Ջրածնի անջատումը ջրից՝ վերջինիս
վրա ազդելով մետաղով: Փոխաբինման ուսուցիչա-

Լաբորատոր աշխատանքներ և դեմոնստրացիա-
ներ. ա) պարզ սաքալորման մեջ ջրի տարբալուծումը (դե-
րական հոսանքով. ջրածնի և թթվածնի հայտնաբերումը (դե-
մոնստրացիա). բ) ջրի տարբալուծումը կալչիումով կամ ուրիշ
մետաղներով (մագնեզիումով, յերկաթով, ծալրահեղ դեպքում՝
նատրիումով):

3. Թթվածին չեղ ջրածին (8—10 ժամ)

1. Թթվածին: Բերթոլետյան աղից թթվածին ստանալու հասկացողութունը կատարվածորի մասին: Թթվածնի հատկութունները: Այլուց թթվածնի մեջ: Թթվածնի կիրառումը: Հասկացողութունը թթվածին ստանալու տեխնիկական յեղանակների մասին:

Լաբորատոր աշխատանքներ և դեմոնստրացիաներ. ա) թթվածնի ստանալը բերթոլետյան աղից և բերթոլետյան աղի և վոլպես կատարվածորի մանգանի կրկնօքսիդի խառնուրդից. բ) ածխի, ծծմբի, կարմիր ֆոսֆորի և չերկաթի աչրումը թթվածնի մեջ:

2. Զրածին: Զրածին ստանալը: Զրածնի հատկութունները: Զրածնի բոցը: Թթվածնի մեջ ջրածնի այրման դեպքում ջրի առաջացումը: Շառաչող գազ: Զրածինն արտադրութայն մեջ և ջրածին ստանալու տեխնիկական յեղանակները:

Լաբորատոր աշխատանքներ և դեմոնստրացիաներ. ա) ծծմբական թթվի վրա ցինկով աղաչելով ջրածնի ըստանալը, ջրածնի մաքրութունն ստուգելը. լուծույթում ցինկի արջասպի հայտնաբերելը. բ) փորձեր, վորոնք ցուցադրում են ջրածնի թեթևութունը (դեմոնստրացիա). գ) ջրածնի և ողի խառնուրդի պայթեցումը թիթեղա տուփի մեջ (դեմոնստրացիա). դ) ջրածնի աչրումը թթվածնի մեջ և այդ դեպքում ջրի առաջացումը:

4. Սոսնիկ հասկացողութունը ելեմենտի մասին (2—2 ժամ)

Բարդ և վոչ բարդ նյութեր: Սկզբնական հասկացողութունը ելեմենտի և պարզ նյութի մասին: Ամենից ավելի տարածված ելեմենտները: Մետաղներ և վոչ մետաղներ:

